

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Աստղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գրության բոլոր յերկրների, միացե՛ք!

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 25

ՊԵՏԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԺՈՂՈՎԱՁՈՒԻ



368 (47)

Պ-48

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1926

ՑԱՆԿ

ՑԵՐԵՒ

- | | | |
|----|---|-------|
| 1. | Պետական ապահովագրությունը, յերկու տարվա
աշխատանիքների արդյունքը և ապագա ամելիք-
ները. Ա. Գ.-ի | 3—10 |
| 2. | Պետական ապահովագրության իրավական հիմունիք-
ները. Ա. ԳԱՐԱՄՅԱՆԻ | 11—21 |
| 3. | Խրճիք-ընթերցարանի աշխատանիքները. Պետապի վե-
րաբերյալ | 22—27 |
| 4. | Գործակալի գրույցները գյուղացու հետ ապահովա-
գրության մասին | 28—42 |
| 5. | Կենդանի գեկուցում Պետապի մասին—պիես | 43—94 |
| 6. | Քառյակներ | 95—96 |

Վ 33
Հ-48
Տա 1297

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացն' ի!

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 25

ՊԵՏԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԺՈՂՈՎԱԾՈՅՈՒԹՈՒՆ

ԺՈՂՈՎԱԾՈՅՈՒԹՈՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ
ՅԵՐԵՎԱՆ
1926

43.974

19 JUL 2013

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՅԵՐԿՈՒ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ
ՅԵՎ ԱՊԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ապահովագրությունը նորություն չի:

Քանի մարդու գաղանճերից չեր տարբերվում և վայրենի կյանք եր վարում, նա վոչ մի բանի մասին չեր մտածում:

Բայց հենց վոր մի քիչ ավելի խելքի յեկավ, և ավելի կրթված դառավ, նա սկսեց ու որվա մասին հոգս քաշել, եսորվա ձեռքն ընկածից մի բան հետ դնել վաղվա համար:

Ուրիշ խոսքով՝ նա սկսեց իր ապրուստի ապահովության մասին մտածել, վոր անհաջողության ժամանակ դատարկածեն չմնա:

Հենց վաղվա մասին ետք հոգս քաշելը, ու որվա համար պահուստ ունենալն ապահովագրության ամենապարզ, հասարակ ձեռն ե, վոր մարդիկ գեռ չառ ու շատ վաղուց գիտեյին, և վորին մենք ասում 'Ենք' «սև որվա համար խնայողություն անել»:

Բայց ետ տեսակի ապահովագրությունը—յերբ ամեն մարդ, կամ ամեն մի ընտանիք ինքն իրա մասին և հոգս քաշում, խնայողություն անում—չի կարող իր նըպատակին հասնել:

Ամեն մարդ խոչ չի՝ կարող ենքան հետ գցած փող ունենալ, վոր դժբախտության ժամանակ միունի իր ցավը հոգա:



60377.67

ՏՐԵՅՏԻ Ա.Պ.Ա.ԶԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպիլար 706 ր.

Պատգեր 3377

Տիրած 1500

Շատ անգամ փորձանքը վրա յե հասնում ե՞նպիսի
ժամանակ, վոր մարդ կամ իսկի հոգեվահուստ չունի,
կամ ունեցածը շատ ու շատ քիչ ե լինում և ցավին դար-
ման անել չի կարող:

Իսկական ապահովագրությունն են կը լիներ, յերբ
զուլումի, փորձանքի ժամանակ մարդու կարողանար իր
վնասը ծածկել, իր զարդը հոգալ, առանց հարցնելու,
թե նա ինքն եղքան փող ունի՞ հետ գցած, թե վո՞չ:

Իսկ եդ բանը կարելի յե անել, յերբ սև որվա մտախն
վոչ թե ամեն մարդ ջոկ-ջոկ է հոգս անում, այլ ամենըը
մեկակ, ամբողջ հասարակությունը միասին են մտա-
ծում ու խնայողություն անում և խնայած, հետ գցած
փողերը գառնում են ամենքի սեփականությունը և դրժ-
բազդության ժամանակ վնասվողներն ովտվում են նր-
բանից հավասար իրավունքով:

Սա յե իսկական ապահովագրությունը:

Եսքան գեղեցիկ ու լավ ե ապահովագրություն դա-
դափարը:

Բայց ես գեղեցիկ ու լավ գաղափարը՝ խոշոր փո-
ղատիրական և հոգատիրական յերկրներում փոխանակ
ամբողջ ժողովրդի, մանավանդ քյասիբ-քյուսուրի՝ ոգ-
տին ծառայեցնելու, վերցրել ու դարձրել են մարդկանց
խարելու, թալաներու և փող վաստակելու մի հեշտ մի-
ջոց, ճիշտ հնապես, ինչպես նույն բուրժուայները և փո-
ղատերներն ովտվում են՝ հոգուա իրենց գրպանի։ զի-
տությունից, նորանոր գյուտերից և բոլոր եդ տեսակի
բարիքներից։

Ի՞նչ են ասում նրանք։

Նրանք ապահովագրում են վոչ թե իսկակ ու կրակ-
գեղականի ցանքսն ու անսունը, այլ հարուստների
մեծ-մեծ, քարաշեն տները, խանութների խոշոր ապա-

կիները, սիրուն վոտները, մաղերը, գործարանները,
տների շքեղ սարք ու կարգը և այլն, վորոնցից կարող
են շատ փող վերցնել և քիչ բիսկ անել։

Իսկ խորհրդային իշխանությունը ինչպես գիտու-
թյունն ու տեխնիկան դարձեց աղքատների սեփակա-
նություն, ինչպես դպրոցների գոները բայց արեց ամ-
բողջ ժողովրդի առաջ, ճիշտ եղակն ել նա կարողացավ
ապահովագրությունը դարձնել ամենքի ովտին ծառա-
յոց զործ, կարողացավ ապահովագրությունը մտցնել
գյուղացու խրձիթը, վոր նեղ որին աղքատ գյուղացին
առանց նեցուկի չընա:

Խորհրդային իշխանությունը թանգանոց հայելինե-
րի փոխարեն ապահովագրում է գյուղացու ցանքսն ու
անսունըր։

Ես ասածներից արդեն յերկում ե, թե ինչո՞ւ մե-
զանում ապահովագրությունը պետական և համաժողո-
վրդական ե, ընդհանուրի համար ե, և վոչ թե ուրիշ
յերկրների նման անհատների, հարուստների և առե-
տրականների մասնավոր զործ։

Մեր տեսակի ապահովագրությունը միմիայն խոր-
հրդային իշխանությունը կարող է ունենալ, վորովհետեւ
միմիայն նա յե իսկական ժողովրդական իշխանու-
թյունը։

Դրա համար ել, թեև ապահովագրության գաղա-
փարը շատ ու շատ չին ե, բայց նա իրականություն
գառավ միայն վերջին ժամանակներս, խորհրդային իշ-
խանության որով։ Նա ընդամենը 5 տարվա կյանք ունի,
սկսած 1921 թվից։ Իսկ հայաստանում պետական ապա-
հովագրությունը մտել է միայն 1924 թվից։

Առաջին տարին մտցրել ելինք ցանքսերի ու այդի-
ների ապահովագրություն միմիայն կարկտահարության

դեմ և են ել շատ քիչ գումար եր նշանակված վնասների համար:

Հացահատիկների և բանջարանոցների մեկ դեսյատինին նշանակված եր 15 ռ. բամբակի և թութունի մեկ դեսյատինին՝ 25 ռ., և այդիների մեկ դեսյատինին՝ 30 ռ.:

Հենց առաջին տարում (1924-ին) փորձը ցույց տվեց, թե ինչքան տեղին եր ցանքսերը կարկտից ապահովագրելը:

Հայաստանում հազար դյուզից 245-ի ցանքսերը կարկտահար յեղան:

Ամեն մի հարյուր դեսյատինից 8 դեսյատին կարկտին զնաց: Իսկ դա փոքր թիվ չե, վորովհետեւ Ռուսաստանում 100 դեսյատինից մեկ ու կես դեսյատինի կարկտահար լինելն արդեն խոչոր վնաս և համարվում:

Հայպետապն իր հավաքած 80 հազար ոռոքուր դիմաց ստիպված յեղավ վճարել 87 հազար ռ. վիճակ:

Հայաստանի 132 հազար տնտեսություններից 18 հազարը կարկտից վնասվեցին, վորոնց ամեն մեկին դալիս և մոտ մեկ դեսյատին:

Նշանակում ե՝ 1924 թվին Հայաստանում կարկուտը վնասեց 18 հազար դեսյատին ցանքս ու այդի:

Յեթե հաշվելու լինենք եղ 18 հազար դեսյատին ցանքսի իսկական արժեքը, կը տեսնենք, վոր մեր գյուղացիությունը կորցրել է 720 հազար ոռոքի, կամ 360 հազար փութ հաց, վոր 36 հազար հոգու տարեկան սնունդ է:

1925 թվին ցանքսերի ապահովագրության վրա ավելացավ նաև անասունների ապահովագրությունը, վորի շնորհիվ մեծ ոգնություն հասավ մեր յերկը անասապահությանը:

Ինչպես ցանքսերի համար եր, ենպէս ել անասունների համար սկզբում քիչ գումար նշանակվեց, վորովհետեւ դեռ անփորձ ելինք և հարկավոր եր զգույշ զործ բռնել:

Կովը վնասվելու, սատկելու դեպքում՝ նրա գինը նշանակված եր 10 ռ., յեղան և մատակին՝ 20 ռ., գոմեշին՝ 25 ռ.:

Անասունների ապահովագրությունը մտցրած եր 1925 թ. հունվարի 1-ից:

Մինչեւ հոկտեմբերի 1-ը, 9 ամսվա մեջ, Հայաստանում կոտորված անասունների թիվը հասավ մոտ 11 հազարի:

Դրանց իսկական արժեքն անում է մոտ կես միլիոն ոռոքի:

Դրա դիմաց Պետապը վնասվածներին վճարել է 125 հազար ոռոքի:

Յերկու տարվա վորձից հետո ավելի ու ավելի պարզվեց ցանքսերի և անասունների ապահովագրությունից գյուղացու ստացած մեծ ոգուտը, Պետապն ավելի վստահություն ստացավ դեպի եր գործը և գյուղացիք սկսեցին ավելի ու ավելի հավատքով վերաբերվել դեպի ապահովագրությունը, փոխանակ նրանից յերկյուղ անելու:

Դրանից հետո արդեն ամենքն սկսեցին մտածել ապահովագրությունն ել ավելի խորացնելու, տարածելու մասին, գյուղացու շահերին ել ավելի մոտեցնելու մասին:

Դրա հետևանքն են յեղավ, վոր 1926 թվի համար թե՛ ցանքսերի և թե՛ անասունների ապահովագրինն (են փողը, վոր Պետապը պիտի տա վնասվողին), ավելացրին:

Հացահատիկների, բանջարանոցների և յուղաբույսերի (կտավհատ և այլն) մեկ դեսյատինի ապահովագինը հիմա նշանակված է 30 ռուբի, բամբակին և թութունին՝ 80 ռ., այդիներին՝ 60 ռ.:

Իսկ անառուների համար—կովին՝ 25 ռ., յեղան և մատակին 30 ռ., գոմեչին՝ 40 ռ.:

Բացի այդ, ես տարի ավելացել ե նաև ձիերի ապահովագրությունը, վորի արժեքը (ապահովագինը) նշանակված է 40 ռուբի:

Մյուս կողմից՝ խոշոր չափով իջեցրած ե նաև ապահովագարը, այսինքն՝ ցանքատիրոջից ու անառատիրոջից (ապահովագրվողից) վերցնելիք փողը:

Յեթե 1925 թվին գյուղացին Պետապին տալիս եր՝ ասենք՝ մեկ ռուբի, հիմա արդեն պիտի տա 60 կոպ., այսինքն անցած տարվա վրա 40 տոկոսով պակաս:

Գյուղական տնտեսության ես ձեռվ /ոգնության համել չառ տեղին եր:

Վերջին վեց ամսվա մեջ կոտորված (սատկած) տնտեսների թիվը յեղել է ճիշտ ե՞նքան, ինչքան անցյալ տարվա 9 ամսվա մեջ (11 հազար):

Սա նշանակում է, վոր Հայտատանում անառուների կոտորվելը պատահական բան չի, վոր ապահովագրությունը չի կարող մեկ-յերկու տարվա համար լինել, այլ յերկար տարիների համար է, վոր ես գործը (ապահովագրությունը) լուրջ խնդիր է և նրա վրա չառ մեծ ուշք պետք է դարձնել:

Ես բոլորը ցույց են տալիս, վոր ժողովուրդն ել իր կողմից պետք է ավելի պիտակից լինի, ավելի ուժեղ կերպով մասնակցի ապահովագրության գործին, վորն ամբողջովին գյուղացիության ոգտին է ծառայում:

Յերեք տարվա մեր աշխատանքի արգյունքները առենելով՝ մենք կարող ենք ավելի վստահ կերպով վոչ միայն Պետապի ստանալիք ու տալիք փողերը հոգուտ գյուղացիության վորոշել (նախահաշվիվ կազմել), այլ նաև մենք կարող ենք՝ սուանց քաշվելու և սուանց վախենալու, մեր ամբողջ կազմը և նրա գործունեյությունը դնել ապահովագրության խկական տիրոջը՝ բանվորների և աշխատավոր գյուղացիների սուած, վոր նրանք ազատ-համարձակ ամեն բան տեսնեն ու քննադատեն:

Եղանակ անել կարող ենք մենք խորհրդային իշխանության մեջ, վորովհետեւ մեր ապահովագրության նրապատակը փող վաստակելը չի, այլ գյուղացիությանն խկական ոգնություն հասցնելը:

Եղանակ անել չեն կարող բուրժուական ապահովագրական ընկերությունները, վորովհետեւ նրանք միայն թալանով են զբաղված և մահու չափ վախենում են ժողովրդի քննադատությունից:

Շատ շուտով մենք ենակես պիտի անենք, վոր սրանից հետո մեր ամբողջ աշխատանքի վրա գյուղացիությունն իր հոկողությունը, իր աչքն ունենա՞ իր բնորած մարդկանց միջոցով:

Մեր գործն եսպես սարքելով՝ մենք սրանից հետո կարող ենք ել ավելի ընդարձակել պետական ապահովագրությունը և ժամանակին հասնել մեր ցանկացած, վերջնական նպատակին. —

Այսինքն՝ ապահովագրություն մացնել վո՞չ միայն կարկտի գեմ, այլև առհասարակ ամեն տեսակի զուլումների և գժրազգությունների դեմ (չորության, հիվանդությունների, հեղեղի (սելազի), մկների, ցուրտի

և այն և այն), կամ ավելի կարճ ասած՝ անբերրիության դեմ:

ՅԵՒ ինչքան խորհրդային փշանությունը զորանում ու ամրանում է, ենքան անբերրիությունից ապահովագրությունը չերազից իրականություն և դառնում և վերջ ի վերջո գլուխ կը դա:

Ա. Գ.

Ա. ԳԱՐԱՄՑԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ապահովագրությունն առհասարակ գոյություն ունի վոչ միայն Խորհրդային Միության մեջ, այլև բոլոր կաղխալխատական պետություններում: Բայց ինչպես Խորհրդային պետության բոլոր հիմնարկներն են տարբերվում այլ յերկրներում նման հիմնարկներից, նույնպես և ապահովագրության դորձն և դրված տարբեր հիմունքների վրա մեզ մոտ և կաղխալխատական յերկը ներում:

Կաղխալխատական յերկրներում ապահովագրության դորձը գտնվում է կաղխալխատականների ձեռքում, և վորովհետեւ ապահովագրության դորձը պահանջում է խոշոր գրամագլուխ, կազմվում են փայտալիքական ընկերություններ կաղխալխատականներից: Ինչպես վոր մասնավոր կաղխալխատականներն առհասարակ աշխատում են բոլոր ձեռնարկվելիք աշխատանքներն այնպիսի հիմքերի վրա դնել, վոր կարողանան ոգուտ սահանալ, նույնպես և ապահովագրության դորձը նրանց ձեռքում հարստանալու և շահագործելու միջոց է:

Խորհրդային ապահովագրությունը նախ և առաջ գտնվում է պետության ձեռքում (այդ պատճառով կոչվում է Պետական Ապահովագրություն), յերկրորդ, ապահովագրության դործով կարող է զրաղվել միայն մեկ հիմնարկություն, այն ե՛ Պետական ապահովագրության վարչությունը, կամ կրծառ՝ «ՊԵՏԱՊԼ»:

Այլպիսով, ինչպես գպրցները, հիմնարկանոցները, զեղանները խորհրդային պետության մեջ ծառայում են ժողովրդի կարիքներին, առանց մի վորեւ ողտի համար, նույնպես և Խորհրդային ապահովագրությունը կյանքի յե հրավիրված ժողովրդական անտեսությունը պահպանելու դանազան պատահարներից:

Պետական ապահովագրությունը բաժանվում է՝

ա) կյանքի ապահովագրության և

բ) գույքի ապահովագրության:

Գյուղանոտեռության համար առանձին նշանակություն ունի գույքի ապահովագրությունը, վորը և հետապայում բոլորը կը վերաբերվի գույքի ապահովագրությանը:

Գույքի ապահովագրությունը լինում է՝ ապահովագրություն կրակից, բույսերի ապահովագրություն, կարկառահարությունից և անասունների ապահովագրություն ստակելուց:

Հայաստանի իրականության համար առանձին նշանակություն ունեն վերջին յերկու տեսակը՝ կարկառահարությունից և անասունները ստակելուց ապահովագրությունները:

Բույսերի ապահովագրությունը տարածվում է դաշտարույսերի, բանջարանոցների, այգիների և առհասարակ բոլոր բուսական կուլտուրաների վրա: Բացի այդ, յեթե բույսերը վնասվում են նաև հեղեղից և մրրիկից, վորոնք առաջանում են կարկառից, Պետական և պատասխանատու յե:

Կարկառահարությունից պատասխանատվությունն սկսվում է առաջին կարկուտը աեղալուց մինչև հունձքի վերջը:

Անասունների ապահովագրությունը տարածվում է առ այժմ $1\frac{1}{2}$ տարեկան և բարձր հասակի խոչը յեղջուրավոր անասունների վրա, և 3 տարի և բարձր հասակ ունեցող ձիերի, ջորիների վրա:

Գետական ապահովագրությունը պատասխանատու յե անասունների ստակելուց հետեւյալ դեպքերից:

1. Բոլոր տեսակի վարակիչ և վոչ վարակիչ հիվանդություններից.

2. Գաղաններից, կայծակից, չրղեցից և այլ գժրախառ դեպքերից.

3. Անբուժելի հիվանդ անասունները, վորոնք անպետք լինելով տնտեսության մեջ՝ մորթվում կամ սպանվում են անասնաբուժի կարգադրությունը:

4. Վարակիչ հիվանդության պատճառով՝ անասնաբուժի կարգադրությամբ՝ սպանելուց:

Ինչպես բուսական կուլտուրաները կարկառահարությունից, նույնպես և անասունների ապահովագրությունը ստակելուց լինում են կամավոր և պարտադիր կոպարային:

Պարտադիր կոպարային ապահովագրությունը նշանակում է, վոր ապահովագրությունը պարտադիր արժեքը, այլ նրա վորոշ մասը, ուրեմն, կամավոր ապահովագրությունը լրացնում է պարտադիր ապահովագրու-

չության համար, նույնպես և «ՊԵՏԱՊՐ» համար, վոչ վոք իրավունք չունի չափահավագրելու իր այն գույքը, վորը հայտարարվում է պարտադիր կերպով ապահովագրած, իսկ «ՊԵՏԱՊՐ» իրավունք չունի գժրախառ գեղքում վնասը չբավարարել, բացառյալ զեղծարանների և ապահովագրվող գույքը թագցնողների:

Կոպարային ապահովագրություն նշանակում է, վոր ապահովագրվում է զույքը վոչ թե իր իսկական արժեքով, այլ սահմանվում է վորոշ միջին զամաքը, ավելի քիչ քան իսկական արժեքը, մոտավորապես հավասար մեկ յերրորդ իսկական արժեքի:

Կամավոր ապահովագրություն նշանակում է, վոր յուրաքանչյուր քաղաքացի իր աղաստ կամքով իրավունք ունի ապահովագրելու իր գույքը: Այժմ հարց և ծագում, թե ի՞նչ կարիք կապրագիր ապահովագրելու, յեթի յուրաքանչյուրը կամավոր կարգով կարող և ապահովագրել տալ իր գույքը, ցանկացած ժամանակին: Այդ հարցը շատերն են տալիս, ծանոթ ըլինելով ապահովագրության հետ: Պատասխանը պարզ կը լինի, յերբ մենք այնպես մունեանք հարցին, վոր այդ պատահարները, վորոնք ապահովագրվում են կրակից, կարկառահարությունից, անկումից, վնաս են հացնում վոչ թե առանձին անհասուններին, այլ ամրող պաղարնակչությանը, իսկ հասարակական չարիքի գեմ պայքարելու պարտականությունը դատնում է պետական մեծ հոգսերից մեկը:

Այժմ վոչ վոք չի առնամ, վոր պետք չե պարտադիր զինակությունը և զորքը, և վոչ վոք չի առաջանուր թշնամու զեմ կովելու իրավունքը վերապահել առանձին անհասուններին, ըստ իրենց կամքի, այլ հակառակն ենք գիտակցում, վոր պետքյունը պարտագոր և ընդհանուր ուժերով պահպանել յուրաքանչյուր քաղաքացու Փիզիքական գոյությանը, չթողնելով այդ հարցի լուծումն առանձին քաղաքացիների կամքին: Այժմ վոչ վոք չի բողոքում անհասունի պարտադիր սրսկումից ժամանակի գեմ, պարտադիր ուսման զեմ և այլն, իսկ յեղել է ժամանակի, վոր անգիտակցության պատճառով բողոքել են, գժգոհել են, այժմ էլ պարտադիր ապահովագրության գեմ բողոքում են միայն չհասկացողները:

Պարտադիր ապահովագրությունը, ասացինք, ապահովում է վոչ զույքի ամբողջ արժեքը, այլ նրա վորոշ մասը, ուրեմն, կամավոր ապահովագրությունը լրացնում է պարտադիր ապահովագրու-

թյունը, ավելացնելով ՊԵՏԱՊԻ պատասխանառվությունը և մոտեցնելով այդ գումարը ապահովագրվող զույքի իսկական արժեքին :

Պարտադիր ապահովագրությունն ավելի մեծ գումարով, իսկական արժեքով, չի ապահովագրվում նրա համար, վոր մեծ գումարով ապահովագրելու դեպքում պետք է վերցնվի համեմատ և մեծ վճարներ (ապահովագին), իսկ այդ՝ չքավոր և միջակ դասի ուժերից վեր է:

Ուրեմն պարտադիր կոպարային ապահովագրությունը մացըր-ված է ի նկատի ունենալով զլիավորապես չքավոր և միջակ դասի շահերը, այդ պատճառով և հենց, վոր ամենից ցածր չքավորն ել կարողանում է ապահովագրել իր ցանքը և անասունը: Նրանք, ովքեր չեն կարողանում վճարել թեև շատ չնչին սահմանված վճարները, նրանց բոլորովին կամ կես մասով ազատում են ապահովագրության վճարներից (ապահովագնից) բայց ցանքը կարկտահարվելիս, անասունը սատկելուց ՊԵՏԱՊԻ վճարում և նրանց վնասը մյուսների հետ հավասար:

Կամավոր ապահովագրությամբ յուրաքանչյուր քաղաքացի այն ժամանակ է ապահովագրում իր գույքը, յեր դրամ և ունենում, պարտադիր ապահովագրությամբ ամբողջ ազգարնակչության ցանքը, անասունը հոկտեմբերի 1-ից (այդ թիվը համարվում է պարտադիր ապահովագրության սկիզբը) հաշվում է ապահովագրված, բայց այն քաղաքացիները, վորոնք հասրավորություն չունեն իսկույն վճարելու սահմանված վճարները (ապահովագները), կարող են վորոշ ժամանակով հետաձգել իրենց վճարվելիք գումարները, կամ վճարեն մաս-մաս, միենույն ժամանակ այդպիսի քաղաքացիների ցանքը և անասունը ապահովագրված և համարվում ընդհանուր կարգով և գժրախտության դեպքում ՊԵՏԱՊԻ վճարում և վնասը, թեև տուժած ապահովագրվողը չի վճարել կամ լրիվ չի վճարել իրեն վրա զրված վճարները: Դա նշանաւում է, վոր պարտադիր կոպարային ապահովագրությունը վորոշ շափ վարկավ և ապահովագրում:

Այդպիսի մեծ արտանությունները, կան քաղաքացիներ, վոր աշխատում են ի չարք զործադրել, այն և աշխատում են ավելի հետաձգել վճարը, քան այդ թույլատրված և հրատարակված կառավարական որենքով, կամ եւ բոլորովին չեն ուղում վճարել.

այդպիսի քաղաքացիների դեմ գործադրվում են վարչական, հարկադրական միջոցներ, և գանձումը, բացի այդ, կատարվում է տուգանքով:

Ցանկանալով կամավոր ապահովագրությունը մոտեցնել դյուզացիության լայն իսավերին, ՊԵՏԱՊԻ մացքեց այդպիս կոչված կամավոր խմբակային ապահովագրություն, ցանքսերը կամավոր ապահովագրելու դեպքում պետք է խումբը բաղկացած լինի վոչ պակաս 10 տնտեսությունից, իսկ անասունների ապահովագրության դեպքում խումբը պետք է բաղկացած լինի վոչ պակաս 1—4 գյուղի ամբողջ անասուն ունեցող անտեսությունների թվից: Այդ պահանջովագրությամբ կարելի յե կամ գեղչ անել օտպուի չափով, կամ ել ապահովագնի կես մասը թույլատրել մացնելու մեկ ամսով հետո:

Սառոր բերգում են ամփոփված տեխնիքական կանոնները:

1. ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր ցուցակագրությունը կատարվում է անասունների համար աշխանը, իսկ բույսերի համար գարնանացանն ավարտելուց:

2. Տարվա ընթացքում անասունները տնտեսության մեջ ավելանալիք՝ 7 որվա ընթացքում, փոքրահասակները ապահովագրական հասակի հասնելիք մեկ ամսվա ընթացքում, անասնատերը հայտնում է դյուղխորհրդին և սահնում է նրանից վկայական:

Յեթե նոր անասունի համար չունենաք վկայական, ձեր անասունը ապահովագրված չի համարվում:

3. Ցուցակագրության ժամանակ պետք է ձեւած, առանց թագցնելու, ցույց տաք ձեր ցանած տարածությունը և ձեր անասունները, դրեւ տալով յուրաքանչյուրի հասակը և գույնը: Բույսերի և անասունների ցուցակագրությունն ունի խոշոր նշանակություն-կարկատարության, անասունի սատկելու դեպքում, և դրա համար պետք է ցուցակագրության ներկա լինի տան մեծը, կամ ընտանիքի այն անդամը, վորն իրենց ցանքսի և անասունների մասին ճիշտ և պարզ տեղեկություն ունի:

4. Յեթե դուք զիսեք, վոր ցուցակագրության ժամանակ ձիշտ ցույց չեք տվել իսկական ցանքսի տարածությունը և անասունների մասին

քանակը, նրա նշանները, նախորոք պետք է հայտնեք գյուղխորչը և վրդին, վոր նա ավելացածի համար ավելի գումար վաճառի. ձեր հայտարարությունը պետք է լինի անպայման մինչեւ կարկտի դաւը և անստունների հիվանդանալը և սասկելը:

2. ԳԱՆՉՄԱՆ ՄԱՍԻՆ

5. Գանձումը կատարվում է հատուկ նշանակված զանձողի կողմից:

6. Գանձման գումարի համար զանձողը պարտավոր է տալու ապահովագրվողին անպայման միայն ՊԵՏՍ.ՊԻ անդորրագիրը, իր ստորագրությամբ և ՊԵՏՍ.ՊԻ կնքով կնքված. արգելում է տալու գանձված գումարի դիմաց հասարակ, մասնավոր ստացականներ:

Այդ կետի ճիշտ իրազործման վրա առաջին հերթին պետք է հսկի ինքը գույքացին:

7. Գանձումները վոչ մի գեղքում չեն կարելի ձգձգել այսոր վաղը գցելով, և պարտավոր եք մինչեւ մարտի 31-ը 1926 թ. վարել զանձողին:

8. Յեթև ապահովագրվողը Պետապին վճարելիք գումարները լիսվին չվճարի մինչեւ մարտի 31-ը, նրա վրա կդատույթ՝ առաջին ուշացրած ամսվա ընթացքում օտականի չափով, այսինքն՝ վոր մուծի մարտի 31-ից հետո մինչեւ ապրիլի վերջը, իսկ յեթև չմուծի ապրիլ ամսվա ընթացքում, նրանից հետո տույժը ավելանում և չգանձված գումարի վրա 10 տոկասի չափով:

Մարտի 31-ից և հետո գանձումը կատարվում է անվիճելի, հարկադրական վարչական կարգով:

9. Գործակալը յուրաքանչյուր ապահովագրվողին ուղարկում է գանձողի միջոցով ծանուցագիր, ուր նշանակված է վճարվելիք գումարը, հետնույթ, կոպար և վճարելու վերջնաժամկետը: Կամ ել վերոհիշյալի մասին իրազեկ և անում գյուղացիներին գյուղատորհի միջոցով:

10. Անասունների և բույսերի ապահովագների գանձումը կատարվում էն միասին:

3. ԼՈՒԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11. Կարկտահարության ժամանակ յուրաքանչյուր կարկտից տուժած տնտեսության մեծը, կամ այդ տնտեսության տեղյակ ան-

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

դամը դիմում է գյուղխորհրդին, վոր են արձանագրի անունը, հայրանունը և ազգանունը՝ (անպայման նույն անունը, հայրանունը և ազգանունը՝ ինչպես գուք վրել եք տվել ցուցակագրության ժամանակ) տուժած կարկտից սառնայի անունը, դաշտի անունը, տուժած բույսերի անունները և վշացած տարածությունը դեսյատինով կամ տեղական չափով:


Յեթև գուք սխալվել եք կամ մոռացել եք գյուղխորհրդին ասելու կարկտից անմիջապես հետո, վոր նա ձեր վնասը վերեւում հիշված ձեռվ արձանագրի, զուք պետք է այն հանձնաժողովին—վորը լիազորված է կարկտահարված արտերը նայելու—հայտնեք, վոր նրանք լրացնեն տուժողների ցուցակը և վերջապես, յեթև նորից չպարզվի ձեր վնասը և այս անդամ զուք պետք է կարողանաք մինչեւ հունձքը տեղեկացնել Պետապի գործակալին: Միայն արդպիսի գեպօռմ բաց թողնված, ցուցակագրված կարկտահար տնտեսությունը կարող է ստանալ իր վնասի բավարարումը, իսկ յեթե տընտեսությունը մոռացության տա իր վնասի մասին հայտնելու—ցուցակագրելու, ընդունված ձեռվ, և հայտնի հունձքից հետո, այդ կարկտահար տնտեսության վնասը չի բավարարվի վոչ մի գեպօռմ:

12. Անասունը հիվանդանալու և սատկելու գեպօռմ պարտավոր եք նույն որը կամ վոչ ուշ հիվանդության և սատկելու մյուս որը հայտնելու գյուղխորհրդին:

Յեթև գուք հիվանդության մասին չհայտնեք մյուս որը գյուղխորհրդին, այլ հայտնեք միայն սատկելու մասին, կամ յեթև հայտնում եք հիվանդության մասին, իսկ չեք հայտնում մեկ որպա ընթացքում սատկելու մասին, ձեր սատկած անասունի վնասը կարող է մերժվի և գուք կը մնաք չբավարարված:

13. Յեթև ցանկանում եք վնասն ստանալ, գուք ինքներդ պետք է պահանջեք, վոր գյուղխորհրդը յերկու վկաներով գան և ձեր սատկած անասունը տեսնեն և իսկույն կազմեն Պետապի տպված բրանկի վրա կար, բայց չմոռանալ, վոր ակտը յերեք որից պետք չի կարելի ուշացնել և իսկույն ակտը հանձնել գործակալին, այլ վոչ պահել գրպանումը ամբիներով:

14. Յեթև պարզվեց, վոր անասուններից կեզծ կամ վոչ ճիշտ տեղեկություն եք տվել, կամ նոր զնված անասունի մասին չեք հայտնել, վնասն անպայման կը մերժվի. նույն և բույսերի համար:





15. Անասունների վարժակիչ հիվանդությունը խոշոր վնաս կառու և հասցնել գյուղի բոլոր անասուններին, վտանգավոր և այդ անասունի թե՛ միսը և թե՛ կաշին ոգտագործել, վորովհետեւ հարեւանիդ առողջ անասուններն եւ կը վարակվեն և կը սատկեն, այդպիսի բոլոր գեղքերում պետք և միսը կաշին էն զյուղից զուրս խորը թաղեք կամ վառեք, այլ վոչ թե զցեք չներին, ինչպես այդ ձեզ մոռ ընդունված ե :

Շատ ժամանակ զյուղացին միսը զցում և չներին, իսկ կաշին վերցնում ե տրեխի համար, չմտածելով, վոր չահում և 10 ոուրին կաշին վրա, իսկ վարակում և զյուղի և նրա հետ իր մնացած բոլոր անասունները :

Դուք այդպիսի գեղքում ժողովրդի և պետության թշնամին եք: Պետապը սույն կետում հիշված բոլոր անկման դեպքում չի վրճարում սատկած անասունի վնասը, պատժելով ձեզ անփույթ վերաբերմունքի համար գեղի ձեր և մյուս քաղաքացիների հարստությունը:

16. Յերբ անասունը սատկում ե վոտը կոտրվելուց, վայր ընկենալուց, փորը պատովելուց, զազաններից և այլ նման դժբախտություններից, այն ժամանակ անասնաբուժի, բուժակի կամ զյուղի խորհրդի զիտությամբ և թույլտությամբ մորթում եք անասունը, Պետապն այդպիսի գեղքում մասի համար պահում և լրիվ վնասի 40 տոկոսը:

17. Յեթե անասնատերն իր անասունը մորթում և մասի համար, ծախելու կամ հենց ուտելու համար, խստիվ արգելվում և ցույց տալ այդպիսիները ինչպես սատկած կամ հիվանդության պատճառով մորթված—այդպիսի գեղքում Պետապը վոչ թե մերժում և վնասը տալուց, այլ անասնատերն ինչպես չարամիտ՝ կենթարկվի դատական պատասխանատվության :

18. Անասունիդ վնասը պահանջիր, վոր գործակալը տեղամ քննի և վճարի անմիջապես, բայց հետեւիր վոր մեկ ամսից չուշանա:

19. Յեթե անասունի ժամանակավոր տեղափոխում ևս մի այլ տնտեսություն, պարտավոր ևս 7 որվա ընթացքում հայտնել գործակալին կամ դյուզիոնիրին, հակառակ գեղքում, սատկելու գեղքում վնասը չի բավարարվի:

4. ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

20. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի բացի պարտապիր ապահովագրությունից, ավելի զնով ապահովագրելու իր անասունները:

21. Անասուններին կամավոր կարգով կարելի յե ապահովագրել ա) առանց անասնաբուժի քննության, միայն ցույց տալով գործակալին այդ անասունները և բ) անասնաբուժի քննությամբ:

22. Անասունները կամավոր ապահովագրվում են լրիվ կազմով միենույն տեսակից, բայց նաև կարելի յե ապահովագրել միայն բոլոր յեզները կամ միայն բոլոր կովերը: Գոմբէները և ձիերը կարելի յե բոլորովին առանձին ապահովագրել, անկախ կովերից և յեզներից:

23. Կամավոր ապահովագրվող անասնատերը պետք ե խկույն վճարի ապահովագրինը, իսկ յեթե նա չի վճարել լրիվ պարտագիր ապահովագրինը, նախ պետք ե նա վճարի պարտագիր ապահովագրի:

24. Կամավոր ապահովագրված անասունին մի ուրիշ վայր կամ անտեսություն փոխադրելիս ապահովագրողը պետք ե հայտնի գործակալին գյուղխորհրդի միջնորդ:

25. Կամավոր ապահովագրված անասունների համար ապահովագրողն ստանում է առանձին գունավոր անդորրագիր:

26. Անփոյթ վերաբերմունքից և չարամառությունից յեթե կամավոր ապահովագրված անասունը սատկի, Պետապը վնասը չի բավարարում:

27. Կամավոր կարելի յե ապահովագրել ամեն ժամանակ, չկապելով այդ ժամանակները պարտագիր ապահովագրության պատասխանավության ժամանակի հետ:

28. Կամավոր ապահովագրված անասունի պատասխանավությունը Պետապը վերցնում և իր վրա 16 որից հետո, զրամը մուծելու որից հաշված :

29. Իսկ յեթե պարզվում է, վոր այդ անասունի մահը տեղի յե ունեցել դժբախտ գեղքերից, այլ վոչ թե հիվանդություններից որինակ, վոտը կոտրելուց, վայր ընկնելուց, այլիվելուց և այլն, այդպիսի գեղքում Պետապն անմիջապես վճարում և վնասը, անկախ այն հանդամանքից, թե քանի որ և ապահովագրված ընկած անասունը:

30. Կամավոր ապահովագրված անասունին ծախելու դեպքում, նոր տիրոջ մոտ այդ անասունի կամավոր ապահովագրությունը ընդհատվում է անմիջապես :

Բայց հեն տերը իրավաւոք ունի ծախվածի փոխարեն իր նոր գնած անասունը նույն պայմաններով ապահովագրելու Պետապի ներկայացուցչի միջոցով, նորից քննելով նոր ապահովագրվող անասունը և յեթե ապահովագրում արը, իսկ ձիերի և ջորիների համար նաև հասակը՝ չի փոխվել, այն գեղագում անասնատերը չի վճարում այդ առթիվ վոչ մի լրացուցիչ գումար :

31. Կամավոր ապահովագրված անասունի ապահովագրության ժամկետը լրանալուց, անասնատերը ժամկետից հետո 15 որվա ընթացքում կարող ե և վնասը ստանալ, թեև ապահովագիրը չի վճարել նույն պատասխանատվության ապահովագրում արի չափով, յեթե միայն հայտնված ելեղի նախորոք զործակալին, վորցանկանում և իր անասունների ապահովագրությունը շարունակել նորից :

32. Կամավոր լրացուցիչ անասունները կարելի յե ապահովագրել այսպիսի գումարով, վորպիսին չավելանա 3—4-ից խականա արժեքից, կոսարի գումարի հետ միասին, Պետապի կողմից լիազորված անձանց գնահատությամբ, անասունը տեսնելու և քննելու ժամանակի:

5. ԶԲԱԳՈՐ ԴԱՍԻ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՆԵՐԻՑ ԽԵԴՐԻ ՄԱՍԻՆ

33. Գյուղխորհուրդն ստանալով իր գյուղի համար ազատաման յենթակա տնտեսությունների քանակը գավառական հանձնաժողովից (Գավգործկոմի նախադաշտությամբ), ընտրում է գյուղի հողմից մեկ հանձնաժողով, վորոշելու համար թե տվյալ գյուղի վո՞ր տնտեսությունն արժանի համարել ազատելու, և այն պես լինի, վոր ազատվողները լինեն ամենից չքայլուներ և ավելի թվով չլինեն այն քանակից, վորպիսին հատկացված են ավյալ գյուղին :

34. Գյուղխորհուրդը հանձնաժողովի վորոշումը հաստատում է և արձանագրությունն ուղարկում է ի անորենություն գավառային հանձնաժողովին, ուր պետք է մատնանշված լինի՝

1) Ո՞վ (անուն, հայրանուն, ազգանուն), 2) ի՞նչ գումարով (վորպիսի գումարը նրա զրավ դրված և Պետապի կողմից կամ լրիվ

կամ եւ կես մասը), 3) ի՞նչ պատճառաբանությամբ արժանի յե համարվում գյուղխորհուրդի կողմից ազատելու համար :

35. Յեթե գյուղին տված ե 10 տնտեսություն, բայց գյուղխորհուրդն ազատում է, որինակ՝ 3 տնտեսություն, վոչ լրիվ Պետապի ապահովագրումարից, այլ ամեն մեկին կես մասով, այն ժամանակ կարելի յե ազատել արգեն վոչ 10 տնտեսություն, այլ 13 տնտեսություն, այն ե՝ 7-ին լրիվ, իսկ 6-ին կես մասով :

36. Բացի չքավորության պատճառով ազատվելու իրավունքից, ազատվում են նաև կարմիր բանտկայինների տնտեսությունները, միայն վոչ լրիվ գումարով նրա վրա դրված, այլ մեկ յերրորդ մասով :

37. Յեթե ազատվողը և չքավոր և, և կարմիր բանակային, այն ժամանակ պետք ե ազատել միայն այն արտոնությունով, վորովայիլի մեծ գումար և ազատում, որինակ՝ նա չքավորությամբ ազատվում է կամ 50 տոկոսով, այլ դեպքում այդպիսի կարմիր բանակային-չքավոր կըստանա չքավորների համար սահմանված արտոնությունը: Ուրեմն նա միայն կըստանա վոչ թե վորպես կարմիր բանակային, այլ վորպես չքավոր, վորովհետեւ այս ձեռով (պատճառով) նա ավելի մեծ արտոնություն է ստանում :

38. Կարմիր բանակայիններն աղասիվում են, յերբ զործակալին կը ներկայացնեն համապատասխան պատշաճ վկայական :

6. ՊԵՏԱՊԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԲՈՂՈՔԵԼՈՒ ԶԵՎԻ ՄԱՍԻՆ

39. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի՝ ա) գործաշարժեական թերի կամ անարդար դորձունեցության վերաբերյալ բողոքել

բ) Հայութապի վրա բողոքելու գեպքում պետք ե դիմել Անդր-

պետապ, Թիֆլիս, Սուլուակի փող. № 8:

գ) Բացի այդ, բողոքատուն անկախ վերոհիշյալներից՝ կարող է զատական մարմիններին դիմել իր շահը սպառանելու նպատա-

դ) Պետապի գործակալների վրա բոլոր բողոքները զրավոր կերպով ձեւակերպեք և գցեք բողոքի արկղը, յեթե դժվարանում եք անմիջապես փոստով ուղարկել Հայութապի ին:

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետական ապահովագրությունը մեծ դեր է խաղում մեր գյուղում։ Գյուղացու տնտեսության ապահովության ինդքտում շահագրգոված է վոչ միայն յուրաքանչյուր գյուղացին ինքը, բանվորը, այլ և պետությունն ամբողջությամբ։ Այդ պատճառով ել մէր Խորհրդային կառավարությունը կազմել է մի այլպիսի հիմնարկ՝ Պետապ, նրան ավել է հարմարություններ, գործունեյության լայն ասպարեզ, մի խոսքով, մի շատ անհրաժեշտ, հարկագոր պարտականություն։

Գյուղացին ինքը զգալով է լավ հասկանալով այդ հիմնարկի՝ Պետապի կարեորությունը, շատ մոտ է զգում իրեն նրան, ցանկանում է ավելի մոտիկից ծանոթանալ այդ հիմնարկի գործունեյությանը։ Դրա համար ել գյուղական ժողովներում և զանազան զբույցների ժամանակ գյուղացին առաջարկում է որակարգի հարց դարձնել Պետապի գործունեյությունը։ նա հարցեր և տալիս նրա գործունեյության վերաբերյալ և պատասխան ինդքտում։

Ահա ի նկատի ունենալով այս հանգամանքը, վոր Պետապը մեծ դեր է խաղում գյուղացու տնտեսության ապահովության և բարձրացման ինդքտում, և վոր գյուղացիությունն ինքն ել մեծ հետաքրքրություն է հոնդես բերում այս հիմնարկի գործունեյության նկատմամբ, իրճիթ-ընթերցարանները պիտի ընդառաջն

գյուղացիության այս պահանջներին և իրենց աշխատանքի մի մասն ել այս խնդրի պարզաբանությանը նվիրեն։

Խրճիթվարները պիտի ուսումնասիրեն Պետապի գործունեյությունը, նրա կատարած աշխատանքների մասին տեղեկություններ և փաստեր հավաքեն, վորպեսզի այդ խնդրով հետաքրքրվող գյուղացուն պատասխան տան։ Հատկապես տվյալ գյուղի, շրջանի և գավառի աշխատանքների վորոշ պատկերը պիտի ունենան։

Դա դեռ բավական չեւ։

Խրճիթվարը վորոշ ժամեր պիտի նվիրի այդ խնդրի շուրջը զբույցներ կազմակերպելու գործին։ Դրա համար անհրաժեշտ է, վոր զոնե ամիսը յերկու անգամ խրճիթում զբույց կամ թեթե դասախոսություն կազմակերպի։ Դասախոսության ժամանակ պիտի խոսել Պետապի նշանակության մասին, նրա գործունեյության շուրջը հարցու պատասխան, զբույց կազմակերպել, թվական տվյալներով և իրական փաստերով պարզաբանել Պետապի գործունեյության հետ կապված այս կամ այն հարցը։ Հատկապես հետաքրքրվել տվյալ գյուղում տարված աշխատանքներով և ապագա ծրագրով։

«Խորհրդային Հայաստանում», «Մաճկալում» կամ առանձին հրատարակված գրքույցներից և հողվածներից վորպիկ կտորներ բարձրաւայն կարդալ և պարզաբանել, ուշագրությամբ պատասխանելով տվյալ հարցի շուրջ ծագած վիճարանություններին։ Դասախոսողը կամ զբույցներ կազմակերպողը պիտի Պետապի գործակալը լինի կամ խրճիթվարը, այդ խնդրին լավ ծանոթ տվյալ գյուղի ակտիվ աշխատողը կամ գյուղխորհրդի անդամներից մեկը։ Անպայման անհրաժեշտ է նախապես

փաստեր և տվյալներ հավաքել։ Խուսափել ընդհանուր և անորոշ արտահայտություններից։

Խրճիթում կամ ընդհանրապես գյուղում հրատարակող պատի թերթում Պետապի մասին հոդվածներ, տեղեկություններ և թվական տվյալներ տպել։ Պետապի մասին պատի թերթում շատ բան կարելի յե գրել։ Գյուղթղթակիցները պիտի ծանոթանան Պետապի մասին հրատարակված աշխատությունների հետ, վորպեսզի գրված հոդվածները պարզ լինեն, հասկանալի, փաստացի և գործնական հարցեր քննեն։ Հատկապես պատի թերթում պիտի գրել, վոր իրենց գյուղում այսքան տնտեսություններ կամավոր ապահովագրվել են, հրդեհից հետո քանի ընտանիք ոգնություն ստացան, ի՞նչ պիտի ոգնություն, ի՞նչպես և աշխատում Պետապի գործակալը և նման բազմաթիվ իրական հարցերի մասին։ Լավ կը լինի, յեթե համեմատվի ուրիշ գյուղի հետ, որինակ, մի վորեւ հարեւան գյուղի, վոր այնտեղ Պետապի գործակալն այս և արել, վոր այսինչ գյուղում հրդեհ և յեղել և Պետապից ոգնություն են ստացել կամ չեն ստացել, վոր այդ գյուղում այսինչ բանն արված ե, իսկ մեզ մոտ դեռ վոչ, և այլն։ Այդ համեմատությունը պատկերն ավելի լավ կը պարզի։ Թերթում կարելի յե հարց ու պատասխանի անկյուն կազմել, հայտարարություններ, լուրեր տպել և այլն։ Կարելի յե գրել նաև խրճիթում կարդացված դասախոսության կարձ բովանդակությունը, կարելի յե տպել գործակալի հոդվածը մի վորեւ հարցի շուրջը և այլն։ Պետք ե աշխատել, վոր այս հարցով հետաքրքրվող գյուղացիներն ել փոքրիկ հոդվածներ գրեն, հարցեր տան խմբագրության և այլն։ Այսպիսով, պատի լրագիրը Պետապի աշխատանքները ժողովրդականացնող և հարցերը լուսաբանող կարեռ միջոցներից մեկն է հանդես գալիս։

Բացի զբույցից, դասախոսությունից, բարձր ընթերցանությունից և պատի լրագրից, Պետապի գործունեյությունը պարզաբանող միջոցներից մեկն ել կենդանի թերթն է հանդես գալիս։ Բայց պիտի գույշը լինել, վոր ձանձրակի չլինի։ Դրա համար անհրաժեշտ է հետաքրքիր ծրագիր ունենալ և նյութը կապել անմիջական իրականության հետ և տվյալ գյուղի աշխատանքները գարձնել ծրագրի կենտրոնը։

Կենդանի լրագրի մոտավոր պատկերն այսպես կարող է լինել.

ա) Մի վորեւ փոքրիկ հոդված (առաջնորդող, կարգավորձր, պարզ և հասկանալի բոլորի համար)։

բ) Պետապի մասին գրված թերթե վոտանավորներ, չաստուշկաներ։

գ) Տվյալ գյուղին առանձնապես հետաքրքրող ապահովագրական հարցի մասին գրած մի վորեւ հոդված։

դ) Հրդեհների, կարկտից, յերաշտից վնասված ցանքսերի, արտերի և անասունների մասին լուրեր։

յե) Յերդ, փոքրիկ ներկայացում (ինսցենիրովկա)։

զ) Վերջարանը՝ յեղբափակման մի հոդված, իբրև կոչ կամ առաջարկ ուղղված հանդիսականներին։

Այս միջոցով կարելի կլինի հետաքրքիր բովանդակությամբ ժողովրդականացնել Պետապի կատարած աշխատանքները, տեղի ունեցած գեղքերի մասին տեղեկություններ տալով և առաջարկներ անելով։ Այսպեսի ծրագիր կարող է կազմել քիչ թե շատ պատրաստություն ունեցող խրճիթվարը, գյուղի ակտիվը։ Մանականդ, վոր մեր իրածիթվարներից շատերը թղթակիցներ են, գրականությամբ են պարապում, ունեն սեփական

գրվածքներ և այլն։ Պետապի գործունեցության պրոպրա-
գանդակով կարելի յե ամբողջ տարբին զրադվել, ոտ-
կապված չե կամպանիայի կամ վորոշ ամիսների հետ։
Այնպես վոր, հնարավորություններ կան տարվա մեջ մի
քանի անգամ նման յերեկոներ կազմակերպել։

Հետեւյալ խնդիրն ե, վոր խրճիթներում մի քանի
գրքեր, տեղեկություններ լինեն, վորպեսզի վոչ միայն
խրճիթվարը նյութ ունենա իր աշխատանքների համար,
այլ և զրույցների, դասախոսությունների, կենդանի
լրագրի և յերեկոների համար։ Իհարկե, Պետապի մասին
շատ քիչ գրականություն կա, բայց յեղածր պիտի
աշխատել ձեռք բերել։

Խրճիթների տեղեկատու սեղաններն ել պիտի ըս-
տարարեն այդ հարցով հետաքրքրվողներին։ Պետք ե
նյութեր հավաքել Պետապի գործակալի միջոցով,
գյուղխորհրդից, գյուղատնտեսից և այլն։ Այսպիսով,
հնարավոր կլինի դիմող գյուղացու հարցին պատասխա-
նել։

Ահա ընդհանուր առմամբ խրճիթի աշխատանքների
ծրագիրը Պետապի վերաբերյալ։ Սա չի խանդարում
այն բանին, վոր աշխատանքների մեջ պետք ե չեւտել
յուրաքանչյուր գյուղի տունահատուել կողմերը Պե-
տապի գործունեցության վերաբերյալ։

Թող, ուրեմն, մեր խրճիթվարներն անցնեն աշխա-
տանքի, բացարելով, պարզաբանելով Պետապի աշխա-
տանքների հետ կապված անմիջական հարցերը, ժողո-
վրդականացնելով Պետապի նշանակությունը և ժողո-
վրդին հետաքրքրող հարցերին պատասխանելով։ Յու-
րաքանչյուր խրճիթվարը այս խնդրում վորոշ պարտա-
կանություն ունի կատարելու, դրա համար անհրաժեշտ
է մոտիկից ծանոթանալ Պետապի գործունեցության հետ։

Գյուղացու տնտեսության ապահովության համար
Պետապը մեծ դեր է խաղում, իսկ յեթե այդ այդպես ե,
պետք ե, ուրեմն, գյուղացիության մեջ տարածել
Պետապի աշխատանքների հետ կապված խնդիրները և
ժողովրդականացնել այդ հիմնարկի նշանակությունը։

Թարգմ. ՄԱՐ. ՌՈՒՅԱՆՅԱՆ

**ԳՈՐԾԱԿԱԼԻ ԶՐՈՒՅՑՑՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԵՏ
ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Գործ. Բարե, բիձա, ի՞նչպես ե քեփդ:

Գյուղ. Քեփս լավ ե, ամա հալս վատ. չըամանքդ ո՞վ լինիս:

Գործ. Յես ձեր շրջանի Պետապի գործակալն եմ:

Գյուղ. Պետապի գործակալ. Հա՛, իմացա, են կարկտի մարդն ես, Հա՛, սատակած մալերի փող տվո՞ղք:

Բարով, հազար բարի յես յեկել, մի ասա տեսնենք՝ ի՞նչ լավ խաբար կա. Ես ձեր ապահովագրելուց յե՞րբ ենք պրծնում. այ ախրեր, ուխար առաջ՝ թագավորի ժամանակն ել ինչի՞ բսենց պարտագիր ապահովագրություններ չկար, ես ի՞նչ յեղավ, վոր բերեցիք ես ապահովագրության տուրքն ել վզներիս փաթաթեցիք, միթամ թե քիչ տուրք եյինք տալիս:

Գործ. Ապահովագրական գործը թագավորի ժամանակն ել կար, դա նոր բան չե, միայն բանը նրանումն ա, վոր թագավորի ժամանակվա և ներկա՝ Խորհրդային կարգերի ապահովագրության մեջ կա մի մեծ տարբերություն, այդ այն ե՝ վոր այն ժամանակվա ապահովագրական գործը գտնվում եր հարուստների—կապիտալիստների ձեռքին. նրանք, վորպեսզի խոչոր փող աշխատեյին, հավաքվել եյին միասին և կազմել եյին մի բաժնետիրական ընկերություն և

ապա հենց այդ ընկերություններն ել տանում եյին ապահովագրական գործը, և քանի վոր նրանց նալատակն եր փող աշխատելը միայն և վոչ ժողովուրդին ոգնելը, այդ պատճառով ել նրանք հատուկ գործակալների միջոցով աշխատում եյին գտնել հարուստ գործարանաբաներեր, կարվածատերեր, և ապահովագրում եյին նրանց քարե շենքերը, գործարանների յերկաթե գործիքներո և այլն, վերցնելով նրանցից խոչոր գումար ապահովագիրին:

Գյուղական հասարակ խրճիթներ ապահովագրելու համար, կամ նրանց անսունները, ցանքսերը, նրանց բոլորովին չեր ել հետաքրքրում ու նրանք դրանց մասին չեյին մտածում, քանի վոր նրանք դրանով վոչ մի չահ չեյին կարող ունենալ:

Գյուղական ապահովագրություն կատարվում եր միմիայն նախկին զեմստվոնների միջոցով, բայց վորովհետեւ զեմստվոնների վլուխն ել անցած եյին հարուստ կարվածատերերը, այդ պատճառով ել նրանք աշխատում եյին ապահովագրել խոչոր գյուղական տնաեսությունները, նրանց կարվածքները, վերցնելով համեմատաբար ավելի պակաս տոկոսներ քան ավելի աղքատ գյուղացիներից, յեթե պատահում եյին դեպքեր ապահավագրելու նրանց ունեցվացքից:

Զեմստվոններին հարկավոր եր գործը տանել այն ձեռք, վոր վերջում չսահանային վոչ մի վնաս և հաշիվ կապիտալիստների ու կարվածատերերի:

Իսկ պարտագիր կողարային արժան ապահովագրություն գյուղացու ցանքսերի ու անսունների համար՝ նրանք չեյին ել կազմակեր-

պում: Բացի այդ, զեմստվոյական ապահովագրությունը շատ տեղերում կատարվում եր զավառապետների գրասենյակների միջոցով, նրանք ել ապահովագրները խառնելով տուրքերի հետ, դանձում եյին միասին, վորի շնորհիվ ել շատ շատ զեղծումներ եյին լինում և ճիշտ վոր ապահովագինը գառնում եր տուրք:

Այս բոլորն ել ի հարկե կատարվում ե թուստանի համար. իսկ մեր Հայտառանի համար հեչ մտածող ել չկար:

Գյուղ. Տո, հեր սրհնած, են վախտը հեչ Հայտառան կա՞ր, վոր նրա համար մտածող ել ըլեր:

Գործ. Հա, ի հարկե, այն ժամանակ Հայտառան ել չըրկար. բայց հիմա, Խորհրդային կարգերում, ապահովագրական գործը բոլորովին այլ ձեռվ եղաված, այն ե՝ նո լինելով պետական, ամենամեծ տեղ տալիս ե գյուղացությանը, ապահովագրելով պարտագիր կոպարային կերպով նրանց թե՛ ցանքսերը կարկտահարությունից և թե՛ անտունները սատկելուց: Պարտագիր կոպարային ապահովագրության լավն այն ե, վոր ավելի շատ արժան ե և ողտավետ՝ աղքատ գյուղացության համար:

Գյուղ. Շատ լսվ, բա ինչի՞նք գուք մեզ զոսով ապահովագրում, եղ ցաքսի ու մալի տերը մենք չե՞նք, թողեք մեզ, կուզենք՝ կապահովագրվենք, չե՞ հո չե, ձեր սիրու մեր մալի ու ցանքսի համար մեզոնից շատ ա ցավու՞մ:

Գործ. Զեզ գյուղացիներիդ համար, կարծում եմ, պարզ ա են, վոր յեթե գյուղում հարկավոր ե մի տու հանել, կամ թե չե մի ճանապարհ չինել, կամ թե մի կամուրջ, այդ զեպքում հավաքվում եք ամ-

բողջ գյուղով և մեջք մեջքի տարով շինում եք ու հետո ոզավում բալորե, յեթե դուք լորորդ չը հավաքվեք և խոսք մեկ ալած՝ ետ գործը շանեք, այլ թողնեք, վոր ով ուզում ե՝ դնա ու աշխատի, այդ զեպքում, պարզ ա, վոր մեկը կերթա, իսկ ասաը վոչ, և եղ գործը կամ չի կերծանա. կամ վերջանա ել շատ յերկար կօաչի ու շատ ու շատ ել թանգ կնոտի:

Եսոր գու աշխատում ես քո հարեանիդ համար, վազն ել քո հարեանը աշխատում և քեզ համար, զա լինում ե մի վոխտպարձ ոզնություն, մեկի և մյուսի համար:

Ահա հենց այդպես ել կա ապահովագրության գործը: Ապահովագրվում են պարտագիր կերպով, վճարում են ապահովագին բոլորը, ստանում են ոզնություն այն բոլորը, ովքեր վնասվում են, և յեթե այսոր վնասվել ե քո հարեվանդ, ստուկել ա նրա կովը կամ յեզը, ձեր այդ վճարած ապահովագներից տրվում ա նրա վնասը. վազը վնասվում ա կարկտից քո արտի, քո հարեվանիդ տված ապահովագնից տրվում ե քո վնասը, ահա եսպես մեկը մյուսի ոզնությամբ ծածկում ա իր վնասը և ապատությունը կործանում իր սնտեսությունը կործանում ից:

Յեթե ներկա ապահովագրությունը պարտագիր չիներ, այլ մնար միայն կամավոր, վոր ով ուզենար՝ ապահովագրվեր, իսկ ավա՞չե, են ժամանակ կապահովագրվեյին հարուսաները. քանի վոր նրանց համար գժվար չեր լինի կամավոր կերպով թանգ ապահովագրվելը, իսկ աշխատավոր, աղքատ գյուղացին դարձյալ կմնար առանց ապահովագրության և մի դժբախտության ժամանակ՝ ձեսքերը ծալած:

Պարտադիր ապահովագրությունը համեմատած կամավոր ապահովագրության հետ՝ շատ արժան է. որինակ, յեթե դուք ապահովագրեք մեկ յեղը 30 ռուբլի կամավոր կարգով, մի տարվա համար պետք է վճարել ապահովագին 1 ռ. 35 կոպ., իսկ պարտադիր կարգով վճարում եք 1 ռ. 01 կոպ., միայն մեկ յեղի մեջ տարբերություն և ունենում 34 կոպ. այդ տարբերությունը ի հարկե ավելի շատ կլինի, յեթե անառողջերը ավելի շատ են:

Գյուղ. Բայց ինչի՞ յեք եղ պարտադիրը եժան անում:

Գործ Պարտադիր ապահովագրությունը եժան և արված նրա համար, վոր աշխատավոր գյուղացիության համար ծանր չլինի ապահովագների վճարելը, և բացի այդ, չե՞ վոր պարտադիր ապահովագրության մեջ մասնակցում և շատ մարդ, իսկ յերբ ապահովագրվողների թիվը մեծ է, այդ գեղքում ծախսերն ել բաժանվում են ավելի քիչ են լինում և եժան, բացի այդ, պարտադիր ապահովագրությունը ազատ և ամեն տեսակի տեղական տուրքերից և գրոշմատուրքերից:

Մեր գյուղացիությունը միշտ խառնում է ապահովագինը տուրքի հետ, այդ միանգամայն սխալ է, քանի վոր տուրքի և ապահովագինի մեջ կա խոշոր տարբերություն:

Տուրքերը ընդհանրապես ծախսվում են պետական և ժողովրդական այլ կարիքների համար, որինակ՝ ճանապարհների, կամուրջներ շինելու, կարմիր-բանակի, դպրոցների պահպանման համար և այլն, իսկ ապահովագները պահվում են առանձին հաշվով, վճարելու ապահովագրվող-

ներին նրանց հասանելիք վնասները:

Պարտադիր ապահովագրությունից զատ, ամեն մեկը կարող է, ի հարկե, իր ցանքու, անսունները ապահովագրել լրացուցիչ կերպով կամավոր ավելի բարձր արժեքով:

Կամավոր ապահովագրությունը գյուղացու համար ամենաուգավետ ապահովագրությունն է, քանի վոր կամավոր ապահովագրության գեղքում նու հնարավորություն ունի իր վնասի խաչոր մասը ստանալու, կամավոր ապահովագրությունն ել կարելի յե անել քիչ ժաման, այն է՝ խրժական: Ամբական անելու գեղքում, այսինքն՝ յերբ մի տասր-քսան տնակեսություններ հավաքվեք և միասին ապահովագրեք ձեր ցանքու կամ անառունները, այդ գեղքում դուք կունենաք վորշաբանություն, այն է՝ կարվի ձեզ ժամանակ՝ մաս-մաս վճարելու ապահովագինը, կամ յեթե կանխիկ տալու լինեք, կանվի 5 % զեխչ: Կամավոր լրացուցիչ ապահովագրության և պարտադիր ապահովագրության գների մեջ մեծ տարբերություն չկա, նու այնպես և արած, վոր աշխատավոր միջին գասին մատչելի լինի:

Կամավոր ապահովագրվելու համար առանձին գժվարություններ ել չկան, հարկավոր և միայն հայտնել գործակալին, և նու կապահովագրի, տալով վրա համար համապատասխան անդորրագիր, միայն՝ այս գեղքում ապահովագինը պետք է վճարել անմիջապես, այլ կերպ, այսինքն՝ առանց փող ստանալու և անդորրագիր գրելու՝ անառունը չի համարվում ապահովագրած:

Գյուղ. Եղ բոլորը շատ լավ ա, հասկացա, վոր եղ բոլորացնի

լորր անվում ա մեր աշխատավոր գյուղացիության ոզտին, համա բայց մի բան չեմ հասկանում, թե փողերի հավաքելու համար ինչի՞ յեք եղան վռազում, չեք սպասում, վոր յերբ փողընկնի ձեռներո՞ւն վախտը:

Գործակ. Փողերը կամավոր կերպով տալու համար ձեզ շատ յերկար ժամանակ ենք տալիս, սկսած հոկտեմբերից մինչև մարտի վերջը, եդ անում ա վեց ամիս. բայց դրանից հետո ել ժամանակ տալ չենք կարող, քանի վոր ապահովագների ստանալուց ե կախված մեր գործի հաջողությունը, յեթե մենք ժամանակին չհավաքենք փողը, կնշանակե և ժամանակին ել չենք կարող վճարել վնասները, կնշանակե փողը ժամանակին ստանալը՝ դա ձեր ոգուուն ե, քանի վոր դուք ել մի գժբախտության դեպում շուտ կստանաք ձեր վնասը, իսկ նա, ով վոր ժամանակին չի տալիս, կնշանակե նա թե՛ իրեն և թե՛ իր հարեանի թշնամին ե, քանի վոր նա խանդարում ա վնասների ժամանակին տալուն։ Երանք, ովքեր ուշացնում են ապահովագնի տալը, այդպիսիներից վերցնվում են 10 % վերադիր, ուրիշ կերպ ել չի կարող լինել. չքավորներին մենք անում ենք զիջումներ, իսկ չվճարողներից վերցնում ենք վերադիր, վոր նրանք մյուս անդամ չխանդարեն բնդհանուր կարգը և ժամանակին տան իրենց հասանելիք ապահովագնը։

Գյուղ. Լավ եք անում, եդ շատ արդար գործ ա, բայց թե ձեր եդ գանձողները, վոր դալիս են փողերը առնում, չի՞ պատահի, վոր մեկ մեկ ել հախունախեն, մենք ի՞նչ գիտանք մեր հաշվը, ինչ ուզում են՝ հո տալիս ենք։

Գործ. Ամեն մեկդ ել կարող եք միշտ ստուգել ձեր վճա-

րելիք ապահովագնը, դա ձեր իրավունքն ա, բայց դրանից դուրս, մենք միշտ ստուգում ենք նրանց, վոր վոչ վոք իրավունք չունենան մի կոպեկ ավել առնելու։

Մեղանում ամեն մի կոպեկ հաշվի յե առնված, դրա համար ել թույլ չի տրվում, վոր ստանց որինական անդորրագրի գանձողը մի կոպեկ ստանա, քանի վոր այդ անդորրագրերը միշտ ստուգում ա գործակալուր, գործակալին ստուգում ա կենարոնից յեկող տեսուչը և ամեն ամիս մենք հաշվի ենք տալիս մեր վարչությանը, այնպես վոր, մի հատ կոպեկ ավել ծախսվել չի կարող։

Գյուղ. Լավ, բա վոր եղքան առնում եք ու տալիս, բա հեծ տակին բան չի՞ մնում. յա թե ինչի՞ եք սպասում, վոր տավարը ստուկի, նոր փողը տաք, այլ ենպես չեք անում, վոր չսատկի։

Գործ. Պատոհած մնում ա, պատահած ել չե, բայց թե եդ մնացածն ել կրկին ծախսվում ա ձեզ համար, առնում ենք գեղեր, գործիքներ, ավելացնում ենք անասնաբուժների թիվը, վոր անասունների վարակիչ հիվանդության գեղեցում շուտ ոզնություն հացնեն, վոր չսատկեն։

Անցյալ տարի Հայաստանը տասնրհնիգ հագար ոռուրի ծախսել ա եդ նպատակների համար, զե ի հարկե, դուք՝ գյուղացիներդ ձեր տեղը նոտած, կարծում եք, թե ձեր մասին մտածող ըլրկա, բայց չե՛, ձեր մասին մտածող շատ կա և միշտ ել կլինի, դուք մի՛ կարծեք, թե յերբ ձեր արտին կարկուտը տալիս ա, կամ թե մալի ա ստուկում, մենակ դուք եք տիրում ու ցավում։

Գյուղ. Շատ լավ, բա վոր եղքան մեզ համար մտածում եք ու ցավում, բա վո՞նց ա, վոր մեղանից վոզ առնում եք, համա մեկ մեկ ել մեզ բան չեք տալիս։

Գործ. Մենք առնում ենք և տալիս ենք, բայց տալիս ենք նըանց, ումը պետք է տալ, ձեզնից հավաքված կոպեկները մենք չենք կարող գեն դցել, մենք չենք կարող տալ նըանց, ումը վոր չպետք է տալ և քարծում եմ, զուք ել համաձայն չեք լինի, վոր ձեր փողերը հախ ու նհախի ցըվենք։ Մենք չենք տալիս նըան, ով սուտ և տառմ, ով ուզում ու մեղ խարել, այսինքն՝ անհնում ու յերեք գեսատին ցանք, ցուցակազրության ժամանակ գրել ա տալիս կեսը, կամ ել մի բան պակաս, կամ թե ունի տասը զլուխ տավար, գրել և տալիս վեցը կամ յոթը, ժամածերավ, վոր փող քիչ տաշին գրամարկպին, վորը բոլորից ա, ինչանակի՝ այդպիսի չար մարդիկ, վորոնք ուզում են չտալ կամ քիչ տալ և վնասի գեպօսմ այնքան ստանալ վորքան ճշմարիս մարդիկ, վորոնք ճշտությունը ցուցակագրվել և վճարել են, այդպիսիները վերջների թշնամին են և յեթե այդպիսիներին Պետապը պատժում ա, վորպես չարամիաների, դրա համար պետք ե գոհ լինեք։

Գյուղ. Զե, այ մեկը, վոր բոլոր անասունները գրել եր տվել, բայց մեկը սատկեց, փողը չավիք, ասել եք թե՝ շատ ես ուշացել, ակար ժամանակին չեք կազմել, զե ի՞նչ անենք, դյուզացի մարդ ենք, գործներս չառա, բնկնում ենք գործով մոռանում ենք, մեկ ել ո՞վ զիտաքանակ ձեռնում ա, բայց բոլորը մարդակերները մարդու մասունք են, մեկ մեկ տեղերում ել ակար կազմելու համար փող են պահանջում, վոր իրավունք չունին, այդ բոլորի համար անմիջապես պետք է հայտնել գործակալությունը։

Գործ. Այս, այդպես ել և լինում, անասունը սատկում ա, անասնատերը ժամանակին չի հայտնում գյուղաբնորչընին, վոր ակար կազմեն, անցնում ա մի յերկու ամիս, նոր հայտնում, վոր իր անասունը սատկել ա, կամ թե՝ ական ել կազմել տալուց ակտը դնում ա գրանիք և մի յերկու ամիս

ել գրանումը պահում ու մի որ միտքն ե բնկնում, կամ պարապում ա, նոր գնում ա գործակոլի մոռ, թե՝ փող տուր։

Դե հիմա զուք տաեք, Եղբան ամիսներից չետք կարելի³ ա սատկել ու իմանալ թե ինչ անուն և սատկել, ինչիցն ա սատկել։

Այսինչ յերբ անասունը սատկում ա, ոլետք ե չենց նույն որը պահանջել, վոր գյուղիսորհուրդը ակար կազմի և հարկավոր չի, վոր զուք ակտը վերցնեք ու գնեք գրաններդ, այլ պետք և պահանջեք, վոր գյուղիսորհուրդը անմիջապես ուղարկե գործակալին, վոր նո ել կարողանա ժամանակին, այսինքն մի ամսվա մեջ, տալ ետ վնասը իսկ յեթե պատահում են գեպեր, յերբ գյուղիսորհուրդը չի անում ետ բոլորը ժամանակին, կամ թե, ինչպես տառմ են, մեկ մեկ տեղերում ել ակար կազմելու համար փող են պահանջում, վոր իրավունք չունին, այդ բոլորի համար անմիջապես պետք է հայտնել գործակալությունը։

Գյուղ. Ճշմարիտ ա, բավ, բա ինչի⁴ մեկ չեք թողնում վոր կաշին վերցնենք, ախտը այդ կաշին աշազին փող աբժի, բա ախտոս չի⁵, վոր թաղենք ախտը եք չուժայից սատկած անասունի կաշին չի կարելի վերցնել բանեցնելու համար։

Գործ. Ի հարկե, չուժից սատկած անասունի կաշին չի կարելի հանել, չուժան վարակիչ հիվանդություն ե, չե⁶։

Գյուղ. Այս։

Գործ. Դե վոր չուժան վարակիչ ա, բա կաշին վարակիչ չի լինի⁷։

Գյուղ. Կլինի:

Գործ. Դե վոր կլինի, ել վո՞ց կարելի յե եղ կաշին հասնել ու տանել մյուս անասուններն ել վարակել. չե՞ վոր գա ել հանցանք ե, և ահա այդ հանցանքի համար ել Պետապը մերժում ա վնասի տալր, վոր մյուս անգամ վարակիչ հիվանդությունից ստակած անասունի կաշին չհանեն և պատճառ չգառնան առողջ անասուններին ել վարակելու:

Գյուղ. Ճշմարիտ ա, եղ տեսակ մարդը՝ կնշանակի՝ իր հարեանների թշնամին ա: Բա լա՛վ, նոր տավար առնելիս ի՞նչ կա, վոր մերժում եք, մեկը մի նոր կով եր առել, մի քանի ամսից հետո իրա հին կովերից մեկը սատկեց և գուք փողը չտվիք—սա ի՞նչ բան ա:

Գործ. Ամեն մեկն ինչպես իրեն անասուններից ծախելիս կամ մորթելիս, նույնպես ել նոր անասուն առնելիս, ամենառը 7 որվա մեջ պետք է հայտնե գյուղխորհրդին կամ գործակալին այդ ծախածի կամ առածի մասին, վոր նոր սատկը ապահովագրեն, և ստանա վկայական, յեթե վոչ, մեկը ունի յերեք կով, մեկն ել առնում ա, լինում ա 4 հատ, նրանցից մեկը սատկում ա, մենք ի՞նչ իմանանք թե ապահովագրվածն է սատկել թե չապահովագրվածը, ահա եղակա գեղքեր են լինում, վոր մերժում ենք:

Գյուղ. Արդարացի գործ ա, շատ արդարացի, ետ տեսակ բաներ շատ արնում: Բա վո՞ց ա, վոր մեկ-մեկ ել պակաս եք տալիս. ետ կարկախ փողերը, դեսատինը տառում եք 30 մանեթով ենք սալահովագրում, համա տալիս եք պակաս:

Գործ. Վոչ կարկախ համար ենք պակաս տալիս և վոչ ել անասունների, այլ տալիս ենք են, ինչ վոր պատ-

կանում ե: Կարկուտը գալիս միշտ խոժ բոլորովին չի՞ ջարգում, պատահում ա, վոր բոլորովին փշանում ա, պատահում ա վոր կեսն ա փշանում, այնպես վոր, յեթե ցանքը կիսով չափ ա փշացել, ուրեմն և տալիս ենք կիսով չափ, իսկ յերբ ամբողջը՝ տալիս ենք ամբողջը, ինչպես և անասունների համար, յերբ սատկում ա և միօր ոգտագործվում ա, այսինքն՝ միօր չի փշանում, այդ գեպքում պահվում ա մսի փողը, 40 % պակաս ենք տալիս. բայց ետ չի նշանակում, թե պակաս ենք տալիս, այլ տալիս ենք այնքան, վորքան վոր պետք ե տալ:

Դուք ել ի հարկե համաձայն չեք լինի, վոր մենք տանք նրան, ումը չպիտի տալ, չե՞:

Գյուղ. Հալբատքի, նհախ տեղը ընչի՞ տաք:

Գործ. Բացի այդ, պատահում են և եսպես կեպքեր, կարկուտը գալիս ա, ցանքսերին տալիս, յեղած-չեղածը փշացնում, գյուղխորհուրդը հանձնաժողովի հետ միասին ցուցակ ա կազմում թե ումը Ե՞նչքան վնաս ա յեղել. մեկ մեկ մարդիկ ել, չե՞ն հետաքրքրվում թե իրանց վնասները գրվեցի՞ն թե չե, մնում են այնքան, մինչեւ վոր մենք մյուսների վնասները տալիս ենք, չենց տեսնում են վոր ուրիշները փող ստացան, նոր քնած տեղներիցը զարթնում ու հավար տալիս, թե ինչո՞ւ իրանցն ել չենք տալիս. բայց պետք ե իմանալ, վոր յեթե նրանք բողոքեն մինչեւ բերքի հավաքելը, են ժամանակ կարելի յե տալ. քանի վոր հեշտ կլինի ստուգել թե ետ բողոքողին ճիշտ վնաս պատահել ե թե՞ վոչ. իսկ յերբ բողոքում են ձմեռը, մենք վո՞րտեղից իմանանք, թե ճիշտ, ես մարդին կարկուտը վնաս տվե՞լ ե թե վոչ:

Գյուղ. Ետել ճշմարիտա, պետք ու չընելու հետո զորթներ, պետք ու մարդու իրան դործն զիտենու:

Գործ. Անգոտածու: Մեր զյուղացիներից շատերը բողոքում են, վոր այս տարի իրր թե իրենցից շատ փող ենք ուղում, այսինքն՝ թանգացրել ենք ապահովթներ, բայց պետք ե ասեմ, վոր վոչ թե թանկացը ել ենք, այլ եժանացը ել ենք, ձիւտ ա, այս տարի անցյալ տարվանից շատ ենք վերցնում, բայց շատ ել տալիս ենք, որինակ՝ անցյալ տարի մի դեսյոտինը 15 ոռորի ելինք ապահովագրում, իսկ այս տարի՝ 30 ոռորի, որին՝ և՛ ավել առնում ենք, և՛ ավել ել տալիս: Մեկ յեզր անցյալ տարի ապահովագրում ելինք 20 ո., վերցնում ելինք 80 կ., իսկ այս տարի ապահովագրում ենք 30 ո., կնշանակե՝ պետք ե վերցնելինք 1—20 կ. չին հաշվով, այնինչ վերցնում ենք 1—10 կոպ. այս ե՝ 19 կոպեկ պակաս. բացի այդ, անցյալ տարի 80 կոպեկ վերցվում եր 9 ամսվա համար, իսկ այժմ մեկ տարվա համար, որին, այս տարի պակասացրել ենք ապահովթներ մեկ յեզր համար 19 կոպեկից զեռ ավելին, սա քիչ բան չի, չե՞: Բացի այդ, չենց այս տարի, վոր յերեք ամսվա ենք ապահովագրել, չենց վարակից հեղմանդություններն ել այդ ժամանակներն են յեղել և այս տարի մեծ զումարով փողեր ենք տալիս վնասների համար:

Գյուղ. Շատ բան ա, բա 19 կոպեկը քի՞չ փող ա, մի տառը դուեխ տավարի համար յերկու մանեթ տարբերություն կանի. բա մեծ բան չի՞:

Բայց մի բան լավ չի, վոր գուք ապահովագրում եք մենակ կարկատից, բա յըրից, չորությունից, քամուց, չոռից, և հսկաց բաներից ինչի՞ չեք ապահովագրում:

Գործ. Ետ մասին մասնակտում ենք, ապահովագրել վոչ թե միայն կարկատից, չորսությունից, չոռից, յըրից և այլն, այլ ապահովագրել անրերիությունից, այսինքն այնպիսի մի ապահովագրություն, վոր ինչից ել վնասվերու լինի ցանքոր, տերը իր վնասոր ստանա, ասկայն այդ ձեի ապահովագրությունը բավական դժվար ա, զրտ համար հարկավոր այերկար մտածել, վորձեր անելու հաշվել այնպիս, վոր ապահովագրինը վոչ շատ վերցնել, վոր զյուղացին դժվարանա տալու և վոչ ել պակաս, վոր վնասի գեպքում Պետական շկարողանա տալ: Կարծում եմ, վոր ապահայում ետ զործը կհաջողգի և զյուղացին հնարավորություն կունենա ապահովագրել իր ցանքոր, այդ կին՝ ամեն մի պատահարից:

Այս բոլորից հետո, ապահովագրական զործը հաջող գնալու համար, ի հարկե, խոչոր նշանակություն ունի ազգայինական թյան մասնակցությունը այդ զործում:

Գյուղ: Մե՞ր, մենք զյուղացի անգրագետ մարդիկու ի՞նչ կարանք ունել:

Գործ. Դուք, հենց այդ անգրագետ զյուղացիներդ, կարող եք հետաքրքրվել ձեր վիճակով, չե՞:

Գյուղ. Ինչի՞ չե:

Գործ. Յերբ յուցակագրողը զալիս ա ձեր ցանքուերը կամ անասունները յուցակագրելու, գուք չատ լով կարող եք հարցնել և սուզել թե նա ի՞նչ ա գրում, ձի՞շտ ա գրում թե վոչ:

Յերբ զանձողը պահանջում ա ապահովագրինը, գուք միշտ կարող եք հարցնել, սոսուզել, իմանալու թե ի՞նչի համար վո՞րքան եք տալիս:

Գյուղ. Կարող ենք, ինչի՞ չենք կարող:

Գործ. Յերբ կարկուտը տրտիդ խփում ա, կարող ես հետաքրքրվել թե քո վնասը գյուղխորհուրդը դրեց ընդհանուր ցուցակում, քո վնասը վո՞րքան դրեց, ճի՞շտ աղբել, թե վոչ:

Գյուղ. Տո, բա չե՞նք կարա, բայց են ա, վոր չե՞նք անում:

Գործ. Ահա հենց այդ բոլորը մեծ դործ ա, վոր դուք անեք, քանի վոր հետո ել ավելորդ չեք բողոքի և մեզ համար ել ավելորդ դործ չեք ստեղծի և մերժման դեպքում ել չեք ասի թե ինչի մերժեցինք:

Դուք այդ բոլորով մեծ դարձ կարէ կառաք ընդհանուր դործի հաջողությանը. իսկ թե ձեր այդ բոլոր ցանկություններին վոչ գյուղխորհուրդը կբավարարի և վոչ դործակալությունը, նոր այն ժամանակ դուք կարող եք բողոքել կենացոն՝ Հայպետապին: Դա ձեր իրավունքն ա:

Գյուղ. Աֆֆարըմ, աֆֆարըմ, ձշմարիտն ասած՝ եսքան վախտ ա, վոչ մեկս ել չենք իմացել ետ բոլորը, ինչ վոր յես եսոր իմացա ու հասկացա. ակարտքա ընի ես ամենը հասկացնեմ իմ դրկից բարեկամներիս ել, վոր մեկ ել նրանք ինձ նման առանց բանը հասկանալու չխսան:

Բարով հազար բարին զառ մեր գյուղը, աչքիս վրան աեղ ունես, ընկ. դործակալ:

Գործ. Դե հաջողություն, շուտով ելի կզամ ձեզ մոտ և ինչ վոր նոր բաներ լինի՝ կասեմ ու կհասկացնեմ ձեզ:

ԿԵՆԴԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄ ՊԵՏԱԿԻ ՄԱՍԻՆ

ԱՐԱՋԻՆ ՄԱՍ

Յերկու գյուղացի սկսում են կենդանի գեկուցումը ներածական վոտանավորներ արտասանելով կամ յերգելով: Առաջին գյուղացին (յերիտասարդ ե) կանգնած ե բեմում, իսկ յերկրորդը (ծերունի) բատրոնի սրահի վերջում գտնվող վորկե բարձրության վրա: Վորպեսզի շշփորենի ուրիշ գործող անձանց հետ, մենի սրանց կանվանենի մունետիկներ:

1-ԻՆ ՄՈՒՆ.—Մի խանգարի, տո ջրի:

2-ՐԴ ՄՈՒՆ.—Ականջներդ, լուռ, սրի:

1-ԻՆ ՄՈՒՆ.—Աշուոյժ, կայտառ գեկուցում,

թարմ կարագը խնոցում,
Լսեք, ի՞նչ ե արծարծում,

Տևսեք ի՞նչն ե մուտք գործում.

Մի նորություն, նորություն

Շատ կարեոր, կամավոր

Ա-պա-հով-վա-դր-ըու-թյուն

Հայտառանում, ամեն տուն:

2-ՐԴ ՄՈՒՆ.—Ել պետք չի կսկիծ, վիշտ,
Իմ ասածը ճիշտ ե, ճիշտ.
Հրդեհն ի՞նչ ե՝ մենք դիտենք.
Մի թշնամի—կույր ու նենդ:

1-ԻՆ ՄՈՒՆ.—Ո՞վ չգիտի գոռողին

Եղ այ կարմիր խորողին:

2-ԲԴ ՄՈՒՆ.—ՄԵԼ վոր թուավ նո թոսից,
Պրծար, դյուզը սազ վտակց.
Բան չի թողնի տանտիբոչ եղ խորոզը
ինքնակոչ:
1-ԻՆ ՄՈՒՆ.—Եղ մի ժառա հոլո խուփ.
Մի բան ել կտ վշի թուափ.
Եղ ել հնուց ցեց ու ախոն
Եղ տավորի ժանդ-ժանտախոտ:
2-ԲԴ ՄՈՒՆ.—Բան չունենաս կով, կթան,
Բան չունենաս կաթ ու թան,
Բան չունենաս ձի ու յեղ,
Ինչո՞վ վարես ու ցանես:
1-ԻՆ ՄՈՒՆ.—Եղ հո յերկու մատա խուփ.
Մի չարիք ել արտ ու թուամբ
Խեղձ գյուղացու վար, վաստակ
Տրարուժ և չենց հստակ.
Իրան կտան քար կարկուտ,
Կյանքը կտնի միշտ խախուտ:
2-ԲԴ ՄՈՒՆ.—Եյո, կտան քար կարկուտ,
Վոչ տուտ ունի, վոչ ել դութ,
Աղքատ, հարուստ չի ջոկում,
Յերկուսին ել մել թակում
1-ԻՆ ՄՈՒՆ.—Հրդեհ, կարկուտ ու ժանտախոտ.
Մեր գյուղացին միշտ տնբախտ.
Տնանկ, անանկ գյուղացին,
Քարին տալով իր քացին
Պիտի տնտուն թափառի,
Գլխին զարկեն՝ պիտ լոի.
Թե բան ունիք ասեք, դէհ,
Ժանտախոտ, կարկուտ ու հրդեհ:
2-ԲԴ ՄՈՒՆ.—Ե, ո՞վ ե, ո՞վ դիտակից,
Մեր գյուղացուն կարեկից,

Վոր ազատի ամենքից
Հենց եղ յերեք չարիքից,
Վոր ազատի ամենքից
ՅԵ՛Վ սպասվող կարիքից,
Վոր չմնաք անոթի,
Վոր շուտ կանգնեք դուք վոտի,
Տնակսության հաստատեք,
Զեղ լով ազըուստ վաստակեք.
Ո՞վ իր ձեռքը կը մեկնի,
Աղքատներին ո՞վ կոպնի,
Ո՞վ վաղ կը տա պետքի չտի:
1-ԻՆ ՄՈՒՆ.—Խորհրդացին Մեծ Պետապ:
2-ԲԴ ՄՈՒՆ.—Նո մեր տուժող դյուղացոց
Համար միշտ ե ջեր ու ծոց
Ամեն մի որ մշտական,
Ողնական ե, ողնական:
1-ԻՆ ՄՈՒՆ.—Ականջներդ, դէհ, ասի,
Զուխտն ել սրի, լով լոի,
Պետապի մասին,
Ինչ վոր պիտ ասեն,
Դուք կը լսեք զեկուցում
Ես կենդանի զրուցում:
1-ԻՆ ՄՈՒՆ.—Զեկուցումը կենդանի,
Մեղ համար ե պիտանի:
2-ԲԴ ՄՈՒՆ.—Մոտավորներ,
1-ԻՆ ՄՈՒՆ.—Հեռավորներ,
2-ԲԴ ՄՈՒՆ.—Ով նոտած ե դահլիճում—
Յերկուսով.—Յեղ լուսավոր խրճիթներ,
Պետապից ձեղ զեկուցում,
Հետո հաշիվ, հատուցում:
ԳԵՏԱԳԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ. —Ընկերներ, ես հիմտ ձեղ հա-
մար պետական ազահովագրության մասին զեկու-

ցում կը կարդամ : Բոլորը ե յուրաքանչյուրդ պետք ե
խմանաք Պետապի մասին : Հայոնի պիտի լինի յու-
րաքանչյուրիդ թե՝ ինչո՞ւ յէ կիրառվում ապահո-
վագրությունը, ինչպե՞ս ե նա աջակցում ու տարե-
րային գժրազդություն կրած գյուղացին Պետապի
ողնությամբ ինչպե՞ս կարող ե նորից վատքի կանգ-
նել...

Ա.Թ.Ա.ԶԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակության միջից) Ա.Ժ
թե ինչ ոյին են մտածել : Լսելը, ի հարկե, կլսենք:
Ե, ինչի՞ ինչի՞ շենք լսի վոր, լսելուց ել հեշտ բա՞ն
աշխարքի յերեսին, բայց մի բան գրուխում չմտավ՝
թե ապահովագրությունը մեղ ի՞նչ ոգնություն
պետք եցույց տա : Բան չունես, գրա՞նդուտն վո՞րն
ա... դրուստ տակմ, զա մի ավելորդ գլխացավանք
ա, ավելի գրուստն կուզեն՝ տակմ, զա ել մի ավե-
լորդ հարկ ա, վոր գեղացու շնչին ուղում են փա-
թաթել, ըհը, վերջին խոսքս, թե չե՞ զրա ոգուտն
վո՞ր գեղացին տեսած կլինի, վոր յես տեսնեմ...
բան են հնարել՝ ապահովագրություն, չե՞ մի, պո-
զեր...

ՊԵՏԱՊԻ ԳՅՈՒՂԱՅԱԼԻ .— Պետապին ապահովագրության
ապահովները հավաքում ե, բայց Պետապի տա-
լիս ե ապահովագրական վարձատրություն : Յու-
րաքանչյուր գյուղացու կոպեկն անգամ Պետապում
հաչվի յէ առնված, վաչինչ չի կորչի : Բոլորը ձեզ
հետ ե գերադարձվում :

Ա.Թ.Ա.ԶԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակության միջից) Եհ
Եհ, հեքյաթ մի պատմի, արեդ սիրես : Մարդուն
սրերու մեջ զոշաղ եք, համտ ոդուար ձեզնից՝ քիչ:
Անդիք արած խոսում եք, բայց մինչև ես ջուխտակ
աչքերով գրա իները չտեսնեմ, վոր սպանես ել՝ չեմ
հավատա:

ՊԵՏԱՊԻ ԳՅՈՒՂԱՅԱԼԻ .— Լով :— Այսոր սեփական աչքե-
րով կտեսնես, կհամոզվես :

Ա.Թ.Ա.ԶԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակության միջից)

Մինչև վոր ես աչքերովս եղ ապահովագրական հա-
տուցումները չտեսնեմ, ձեր կողմ քաշել չես կարող :
Բան եք սովորել, ապահովագրություն... Ձեր սուտ
խոսքերով մարդու աչքին թող եք փչում, պրծավ,
գնաց :

ՅԵՐԱԲՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակության միջից)

Եհ, Աղաբեկ, ելի հոպոպներդ յեկան : Ես մարդն
խոստում չի անում, այլ գործ : Բա իսկի չե՞ս լսել,
վոր մեր մոտիկ գեղերում մի քանիսին փող են բաց
թողել :

Ա.Թ.Ա.ԶԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակության միջից) Զե՞ :

Դու տեսել ես, վոր ասում ե՞ս, ասա, դու տալու
ժամանակ ենտեղ ես յեղե՞լ... ի՞նչ ես սարսազ-
մարսազ դուրս տալիս, մարդ ել եղքան ել հավա-
տավոր լինի՞...

ՅԵՐԱԲՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Ներս վագելով սրահ) Տղերք,
լսեցեք, Արալըին գեղումը անցած որը կարկուտը
տվել ա:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԶԱՅՆԵՐ .— Բմբո... ի՞նչ ա
ասում... վո՞նց թե... Շատ ա խփովե՞լ...

ՅԵՐԱԲՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակությանը) Դղել
ա...

Ա.Թ.Ա.ԶԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ .— (Հասարակության միջից) Հի-
մի, բնկ, գործակալ, եղ գեղացոց կարկուտի վնասը
Պետապի քսակից փող կտա՞ն, թե հենց ենենց...

ՊԵՏԱՊԻ ԳՅՈՒՂԱՅԱԼԻ .— Անպայման ու չտապով : Յես

այդ կարկուտի մասին ավելի չուտ եմ լսել : Գի-
տեմ, թե ի՞նչքան վնաս ե տվել : Այ, սպասեցեք տես-
նեմ իմ ցուցակը, առեմ թե՝ ո՞վ ինչպե՞ս ե ապահո-

վողըլել (ցուցակին նայում է): Մեկը կարտողիու-
յան Սարգիսը, մյուսը՝ Բաքելյան Հմայակ: Հիմի
կարապետյան Սարգիսը պարապելը կերպով և ա-
պահովագրվել, ուրեմն սա համեմատաբար քիչ փոք
կստանա, այլ և Բաքելյան Հմայակի զրությունը:
Սա կամավոր կերպով և ապահովագրվել: Կնշանա-
կի՝ Բաքելյանը ավելի կստանա: Սա կարող է յուր
վնասն անմիջապես ծածկել սերմացու զնելու հա-
մար:

ՅԵՐԱՌՈՐԴ. ԳՅՈՒՂԱՅԻ.—(Հասարակության միջից):
Հիմի վո՞նց առ բանը, Աղաբեկ, հավատացի՞ր:
Ախր, ասացինք, այ մարդ, կտան, սա՞ չէ, չեմ հա-
վատում: Թարս ես, թարս:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Զե, ախպեր, զոսի բան ա՞,
մինչեւ իմ աչքերով շտեսնեմ՝ չեմ հավատա... Հո-
չե՞ք լինդելու....

ՅԵՐՐՈՐԴ. ԳՅՈՒՂԱՅԻ.—(Գործակալին) Ընկեր ջան,
ախը ես մարդիկ չթողեցին, վոր խոսքս վերջացնեմ:
Հիմի եկ կարապետյանն ու Բաքելյանը լսել են,
վոր գու եստեղ ես, վորոշել են զալ քեզ մոտ, ես-
տեղ: Վորտեղ վոր ա, հիմա կերեան:

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Իսկապէ՞ս, այ բավ յեղավ:
Թեհ յես եստեղ ուրիշ գործով եմ յեկել, բայց վո-
չինչ, յես սիրով նրանց դրաւթյամբ կհետաքրքր-
վեմ: Իսկ առայժմս խոսեմ ձեզ հետ ապահովա-
գրության մասին:

Խորհրդային իշխանության կազմակերպուծ ա-
պահովագրությունը ձեզ՝ բոլոր գյուղացիներից
ընդառաջ և գնում: Տարեց-տարի ապահովագրու-
թյան տոկոսների գանձումը համեմատաբար թե-
թեանում է, իսկ պատասխանառվությունն ավե-
լանում: Եվագ կարողության տես գյուղացիներին

ապահովագրական մուծումների ժամանակ զեղչ և
արվում, այսինքն՝ ավելի քիչ են առաջ, քան ունե-
վորները, իսկ բոլորովին չքավորները միանգամայն
ձրի յեն ապահովագրվում: Կոպարային պարտո-
գիր գանձումների, ինչպես նաև կամավոր ապա-
հովագների մուծումներից հնարավոր ելինում ժան-
տախտի գեմ ձեռք առնվող միջոցները լավացնել,
այն ե՝ գավառներում անասնաբույժների թիվն ավե-
լացնել, սրա համար անհրաժեշտ գործիքներ և գե-
ղորայք գնել, քաղաքներում հրդեհաշեջ խմբեր կազ-
մակերպել և այլն:

Որինակ, քանի քանի անգամ Խորհրդային Հայաս-
տանում գյուղացիներին, վորոնք զանազան գրժ-
բախտություն են կրել, Պետապը յուր վճարումնե-
րով նրանց վերջնական կործանումից փրկել է: Քա-
նի-քանի անգամ կամավոր կերպով ապահովագրը-
ված գյուղացիներին Պետապն ոգնել են նրանց նորից
վոտքի կանգնելու, կարգի ընկնելու:

Խորհրդային իշխանության միջոցով հիմնված
Պետապը ընդհանրական խոչոր գործ է:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—(Հասարակության միջից)

Թագավորի ժամանակ չե յեղե՞լ: Լսել եմ, վոր յե-
ղել ե: Են հաշվիդ մեջ չես առնո՞ւմ:

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Յեղել ե, բայց ենպես չի յեղել,
ինչպես հարկավոր ե:

ՅԵՐԱՌՈՐԴ. ԳՅՈՒՂԱՅԻ.—(Հասարակության միջից)

Լավ, գու են ասա, յեթե ապահովագրվելն ոգտա-
վետ ա, ինչի՞ բոլոր գյուղացիներն իրենց ցանկու-
թյամբ չեն գնում, չեն ապահովագրվում: Ինչո՞ւ
համար նրանց պարտագիր կերպով են քաշում են-
տեղ: Լավ չի՞ լինի, յեթե թողնեյինք, վոր կա-
զմակերպություն

մավոր կերպով ապահովագրվելին։ Խոսքի որինակ՝ ուզում ես ապահովագրվել, դնա ապահովագրվեր, չե՛քո գործին մնա, քեֆիդ կաց։

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Ետա լավ, գրան ել հերթով կը պատասխանեմ, զուցե ուրիշ հարցեր ել կան, առեք, կը պատասխանեմ։ Մինչե յերկու հարցը գրատախտակի վրա կդրեմ, զուք մտածեցեք։ Սրանով յես մտքում լավ կը պահեմ, իսկ զուք ել չեք ժոռանա։

ՅԵՐՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՑԻ.—(Հասարակության միջից) Դու ասում ես, վոր մեղ մոտ եսոր Խորհրդային իշխանության ժամանակ ապահովագրության գործը ուրիշ կերպ ադրբաջան, քան թագավորի ժամանակ։ Զանազանությունն ինչո՞ւմն է։

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Դրան ել կպատասխանեմ։ (Գործակալը գրատախտակի վրա կավիճով պարզ գրում ե նրանց տված հարցերը). 1. Ապահովագրության, գործը ցարի ժամանակ, 2. Ինչո՞վ ե տարբերվում Խորհրդային ապահովագրությունը ցարականից, 3. Ապահովագրությունն ինչո՞ւ յե մեղ մոտ պարտադիր։

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Ել ի՞նչ հարցեր կան, ավելք։

ՉՈՐՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՑԻ.—(Հասարակության միջից) Այ, դու ասեցիր, վոր ապահովագները տարեցտարի թեթևանում են, վոր Պետապը գյուղացիությանն ոգնում ե, եղ վո՞նց։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՑԻ.—(Հասարակության միջից) Կամավոր ապահովագրության մասին ել խոսեցիր։ Եղ վո՞նց ե լինելու։

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Եղ յերկու հարցին ել կոլատասխանեմ։ Իսկ առաջիմ թողեք գործ։

(Գրում ե) 4) Պետապը բնակչությանն ինչպե՞ս ե ողջ նում, 5) Կամավոր ապահովագրություն։

ՊԵՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Ել հարցեր չկա՞ն։ Լավ, յեթե ինեն, հետո կտաք։ Տված հարցերին պատասխանում եմ։ Ուրեմն՝ առաջին հարցն ե՝

ինչպե՞ս եր ապահովագրությունը ցարական ժամանակը կատարվում։ Ցարի ժամանակ գյուղացին մարդավայրել չեր ապրում։ Ցարական կարգերը, որենքները հարմարեցված են բուրժույների, կալվածատերերի և հարուստների շահերին ու ոգուտներին։

Ինչ բոլոր գործերի մեջ եր արվում, նույն ել ապահովագրական գործի մեջ։ Այ, որինակ՝ Ռուսաստանում թագավորի ժամանակ փայտիրական ապահովագրական գործը գլխավորապես գտնվում եր կալվածատերերի և նրանց ոգնական քյոխվաների և գրագետների ձեռքին։ Ապահովագրությունից կալվածատերերին ու գյուղական զուրաները, հարուստներն ոգտվում ենին, իսկ իսեղ ու կրակ շարքային գյուղացին ապահովագրության տված ոգուտից բան չեր տեսնում, չեր ստանում։

Ահա հիմա տեսեք, ինչպե՞ս եր ցարի ժամանակ ապահովագրական գործը կատարվում, վերցնենք 1906 թիվը։

(Գործակալը հեռանում է։ Վարագույրը բարձրանում է։ Բեմը ներկայացնում է իին շրջանային վարչության գրասենյակի ներքին տեսարանը։ Յերկու սեղան՝ մեկը տանուտերի (գլավինի) համար, մյուսը պապիր։

Սեղաններն ազատ են: Գյուղացիների մի խումբ ան-
համբեր սպասելով տանուտերին (գլավին) ու գրադիլի՝
իրարու հետ զրույց են անում):

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—(Հուզված) Նրանց ի՞նչ...
Հլա նրանց կաշին մեզ նման մաշկվի, տես վո՞նց են
սուզ-շիվան գցում: Եհ, ի՞նչ, կուշտ են, տաք
հագնված, սարքված, դրսոված, քթերն ել սադ
որը անուշ հոտի մեջ... Վոչ աղն ապակաս, վո՞չ
մաղր...

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—Են հարստությունը, վոր
նրանք ունին, իսկի չարժե խոսել: Մի ջափա քաշին
մտի Ծուռտիկանց Ոհաննեսի դուքսնը, մի տես՝
թե քանի՞ հարիր մանեթի ապրանք դուքս կը բերես-
ել չեմ խոսում տնտեսության մասին, պահու, են-
պես մանեթները վերև իսկի, ու հազարների հասնի,
վոր շշկվածությունիցդ շալվարդ կրոշանա:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Բան ես ասում, բա են մեկը...
չես իմանում, քթի փոքինքին նայես, թե՞ կարողու-
թյանը: Շան տղեն քիչ ա դգե՞լ: Նրանն ափաշկարա
չի յերեսում, աղվեսի մեկն ա, ձեռքի ընկած փողը
բանկն ա գցում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—Եղ դրուստ ա՞, բա յես կար-
ծում եյի՝ խալսը սուտ են ասում:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Ի՞նչ սուտ, ի՞նչ զարափաթ,
քի՞չ են մեր տղերանցը թարանել:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—Սուտ, կլտեն:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Ի՞նչ, սուտ կինամ... Քոսոսով
քսան իրեք տարի յա պիսարություն ա անում:
(Լոռիքյուն):

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Նրանք յերեկ գիշեր կուզնանց
բաղումը քեֆ են արեւու վեր ընկեր չնթռել, իսկ

դու եստեղ մղմղալեն սպասիր, թե յե՛րք պիտի գան:
Գնաս՝ վայ ա, չգնաս՝ վայ ա:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—Հլա մի փորձի տեղիցդ
շարժվի, կանցելարիծառան, չե՞ս տեսնում, գլուխը
շան նման դուրս ա գցում, վատվատում ու հայդե,
մին ել տեսար՝ իմաց արեց, պրծավ... հարայ-հրո-
ցը կարկաի նման կսկսվի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—Բացակա լինելուդ համար
մեկ ել տեսար են սառցատան փոսում ուշքի կը գաս,
ու հետնա աշխատանքի ամբողջ որդ կը կորչի: Եւ
կարս ջուզաբ տա՞լ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—Դուշմանս վոչ ընկնի սառ-
ցատան փոսը, բհր, մի-մի մատը սե-սե ձիճուներ...
Վո՞նց են կծոտում, ամման, պատմելու բան չի...
(Ներս ե մտնում գրասենյակի ծառան. չորս կողմն ե
հայում):

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՅԻ.—(Ծառային չի նկատում) Մեր
բախտն ել շան բախտ ա... (Մյուս գյուղացիները
ձեռքերով նշան են անում, վոր լոի):

ՅԱՌԱՋԻՆ.—(Ցույց տալով զյուղացիների վոտքերը) Ես
զահրումար պոլը կեղաստեցիք, կանցելար ա, ախոռ
չի: Քուչում տեղ քիչ կա՞: Դե, հայտե, քշվեք ես-
տեղից... ժալոնս դուք չեք տալի:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Խի... ինքներդ մեզ եստեղ
կանչել, հիմա դուրս եք անո՞ւմ...

ՅԱՌԱՋԻՆ.—Շատ ել թե, կանչել ենք, ըստե՞ղ պիտի հա-
վաքվեք... Քուչեն քանդվել ա՞... Զե, աստված-
ներդ սիրեք, եկեք դլսիս նստեցեք: Դե ել յերկա-
րացնել միք, հայդե...

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՅԻ.—Բմբո... են անձրեի տակ
վո՞նց կանգնենք:

54

ԾԱՌԱՅ. — Վո՞նց թե՝ վոնց կանգնենք, չափո՞ր եք, վո՞ր հալվեք, թե՝ ենտեղի կանգնողներիցը լսվ մարդիք եք... (Գյուղացիներին իրելով) զեհ, գլուխ չունիմ ձեզ հետ խոսք ու զրեցի բռնվելու, փաստ-իրուստներդ հավաքեք:

ՅԵՐԿՐՈՐԴ. ԳՅՈՒՂԱՅԻ. — Սպասիր, մարդ ասուծո, ո՞ւր ես բըթի-բըթի տալի, կանցելարր կերանք վոչ... վիշ...

ԾԱՌԱՅ. — Վո՞նց թե սպասեմ, յասավուլ ես, թե՝ պահապան հրեշտակ, վոր գլխիդ զարավուլի նման կանգնեմ, թե՝ հերանցդ զարավաշդ, ոտք յել, կորեք... արինս գլխիս խփեց հա...

ՅԵՐՐՈՐԴ. ԳՅՈՒՂԱՅԻ. — Ել խի՝ յես նեղանում, Հորութին, կնկանս կասեմ, կցա կեղտոտ պորդ կորրի...
ԾԱՌԱՅ. — Եղ խոստումները ձեզնից շատ ենք լսել: Հենց վոր խոսքը գործին ա գալիս, ենպես եք փախչում, վոնց վոր խրանած յեզը:

ՅԵՐՐՈՐԴ. ԳՅՈՒՂԱՅԻ. — Խի՝, քի՝ յեր կնանիքն են ոթախը սրբել:

ԾԱՌԱՅ. — Թուհ, չուն-շան տղերք, վոնց են կեղտոտել, հիմի արի ու սրբի: Բա անիծված հոտը վրբրներից ենպես ա փշում, ասես մարդիկ չը լինեն, այլ հոտած ջանդաքներ, վուփ... (Բարկացած՝ պատուհանները բաց ե անում): (Ներս է մտնում գրագիրը, կաղում և, չեսված է ձեսնափայտին):

ԳՐԱԳԻՐ. — (Ծառայի կողքով անցնելիս՝ խփում ե մեջ թին) Քյավթառ-քյոսի, թող ես բարձրացրել:

ԾԱՌԱՅ. — Կամաց-կամաց, մի բղավի:

ԳՐԱԳԻՐ. — Յեզ քեզ կամաց ցույց կտամ... Զուլ ցունիր, թողը նստի:

ԾԱՌԱՅ. — Առանց քեզ ել գիտեմ...

ԳՐԱԳԻՐ. — Պատասխանդ անպակաս ա (ծառան փընք-փալով դուրս ե գնում: Գրագիրը շպրտում ե ձեռնափայտը ու նստում յուր սեղանի առաջ: Զեռքը խում ե սեղանի յերեսին) թողը վոնց վոր ավագ (գլուխը բռնելով) ես գլուխս գընգգընգում ե, ասես արձիձ են լցրել... Եյ սատանի պոչ, փայտավերցը ու արի սեղանի յերեսը սրբի:

ԾԱՌԱՅ. — (Կուլիսների հետևից) Ես բոսկեյիս:

ԳՐԱԳԻՐ. — (Գրագանից ծուլորեն հանելով բանալին) Ես-տեղ կարծեմ մի բան ելի պահել: Վո՞րոել եմ խցկել: (Արկղը բաց ե անում ու այնուեղից դուրս ե բերում ողիի փոքրիկ շիշը, բերանն ե քաշում, խմում, վործում ե, շուրբերը լպատում ու նորից շիշը յուր տեղը դնում): Որչնպի ես արագ հնարոցը, աս վոր չլինի, մեր բանն առաջ չի գնա: Ներսս վառեց թողեց: (Ներս է մտնում ծառան, սեղանը պրում ե անկարգ ձևով, այնպես վոր փոշին բարձրանում ե դեպի գրագիրը: Գրագիրը սկսում ե փոշտալ): Այ սատանի ծոցը մտնես, հա, անխելք քաչալ: Կորիր աչքիցս:

ԾԱՌԱՅ. — (Փնք-փնք-փալով) Միշտ ել չկամություն... Ուզում ես լսվ անես՝ խաթա յա, վատ անես՝ ելի խաթա...

ԳՐԱԳԻՐ. — Յես քեզ ցույց կտամ լսվն, փաստիունեղ հավաքի: (Ծառան ծուլորեն հետ ե դառնում, զընում: Գրագիրը սեղանի արկղից հանում ե բղբեր և նետում սեղանի վրա: Գլուխը չարացած կրխում ե բղբերի մեջ, գոռում ե) Եյ, ո՞վ կա զոտն հետեւ... Ով վոր աղահովագրության վող ա բերել թող ներս խցկի... (Գոռան յետև կանգնած գյուղացիներն իրար իրմը-տելով ներս են բափում):

ԳՐԱԳԻՐ. — Ի՞նչ եք վոչխարի հոտի նման ներս թափ-
վում, մեկ-մեկ չե՞ք կարող դալ: Ապա մի հետ քաշ-
վեցեք, յալլա... Մեկից ավելի ներս չմտնեք: Նո-
րաթը բոլորիդ կը հասնի: (Գյուղացիները իրար են
խառնվում, ամեն մեկը ուզում է առանձնանալ ու
առաջ ընկնել): Տնաքանդներ, յես ձեզ են վախտը
ի՞նչ առի, խլացել եք, ի՞նչ ե... Քշվեք, ուզ յե-
ղեք: Դիմի, դիմի, վոչ մեկն եստեղ չմնա: Վորիդ
ուզենամ, յես ինքս կկանչեմ: (Գյուղացիները դուրս
են գնում):

ԳՐԱԳԻՐ. — Յուր մատյանին մտիկ տալով՝ (կոնչում ե)
Թորոսյան Գրիգոր...
(Ներս ե մտնում քանի հինգ տարեկան յերիտասարդ,
գեղեցիկ գեղջկուհի):

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Յես Գրիգորի տեղն եմ յեկել: Նա քաղաք
աշխատանքի ա գնացել:

ԳՐԱԳԻՐ. — Դու ետ ասա, փող բերել ե՞ս:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Ապահովազրության հմար ավել ա...

ԳՐԱԳԻՐ. — Ինչքա՞ն ա զրկել...

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Անցած տարվա չափ:

ԳՐԱԳԻՐ. — Ի՞նչ անցած տարվա չափ, բա չե՞ր իմանում,
փոր ես տարի յերկու անգամ ավելացել ա՞:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Վո՞նց, բա քե մատաղ, ասում եյիք, վոր
ամեն տարի մի տեսակ, մի չափով ալիսի փող տանք:

ԳՐԱԳԻՐ. — Ասում եյինք, ասում եյինք: Թե վոր ասում
եյինք, ես վո՞նց ես տարի ուրիշ թափուր դուրս ե-
կավ: Հենց գլխներիդ զոռ եք տալիս, փողը դեսը
տուր:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — (Շփոքված) Հիմի յես ավել փողը վոր-
տեղից ճարեմ, քե մատաղ:

ԳՐԱԳԻՐ. — Իմ դործը չի, վորտեղից ուզում ես, ճարի:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Ախր վո՞նց անեմ:

ԳՐԱԳԻՐ. — Վոնց, այ ըսենց, վոր եսոր փողը չտաս,
փոսում կը նստացնեմ, իմացա՞ր:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Հիմի ի՞նչ անեմ, ես ի՞նչ սե որ գլխիս
եկավ (Զոքում ե աղածելով) Վոտքիդ մեռնեմ, աղա
չակոր, մի կորցնի, մի սպանի մեզ, մեղք ենք:

ԳՐԱԳԻՐ. — (Կատաղած ձևացնելով) Ել սուդ ու շիվան
մի բարձրացնի, գլուխ չունեմ, տաված ա, պտի
տաս... Որենք ա, մասիսարություն չի...

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Վոտքիդ մեռնեմ, բա եղ տեսակ որենք
կլինի՞... Մեղք ենք, աղա չակոր, կնիկարմատ
եմ...

ԳՐԱԳԻՐ. — Լավ, լավ, հաղար անգամ տեկ եմ, վոր կը-
նիկարմատի գործը չի ըսենց բաների մեջ խառնվելը,
եստեղ ծառայելով հո գլխիս լաչագ չպիտի՞ գցեմ:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Ես անգամ ների, քե մատաղ:

ԳՐԱԳԻՐ. — (Հանկարծ մեղմանալով ու չափազանց սի-
րալիր): Լավ, լավ, քո խաթրիդ չեմ դիպչի, գիտես,
վոր քեզ պատվում եմ: Ի՞նչքան մոտդ կա՝ տուր,
մնացածի համար, հենց վոր երեխեդ քնացնես, արի
ինձ մոտ տուն, կիսունեք: Յես քեզ կսովորեցնեմ, թե
վո՞նց պետք ե մարդ դժբախտությունից գլուխը
դուրս հանի: Իմացա՞ր...

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — Վույ, եղ վոնց կարելի յա: Խալին ի՞նչ
կասի, վոր յես քեզ մոտ գամ, աղա չակոր, են ել
իրիկավա վախտը: Ուրիշ բան կլիներ, յեթե ընտանի-
քով լինեյիր, համա մենակ մարդ ես, վո՞նց կլինի...:

ԳՐԱԳԻՐ. — Աղջի, մենակ ավելի լավ չի՞: Խանգարմունք
չի լինի: Դե լավ՝ իսուք ու զրից չանենք, մոտիդ փո-
ղը չմի տուր, իրիկունը կզառ՝ կիսունեք:

ԳԵՂՉԿՈՒՀԻ. — (Փողը զրաքրին տալով) Աղա չակոր,
ջանիդ մեռնեմ, մի արա եղակս բանեց...

ԳՐԱԳԻՐ.—(Փողը սեղանի վրա դնելով) ԴԵ գնա, գնա,
ժամանակ չունեմ, չե՞ս տեսնում ինչքան ժողովուրդ
ա ինձ սպասում, հետո կդառ՝ կիսունք... Հոմա
գաս, հա՞:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԻ.—Բա խալիսր՝...

ԳՐԱԳԻՐ.—(Սպաննալով) Զգաս՝ են փոսումբ կնսաց-
նեմ, ճիճվեքի փայ կշինեմ:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԻ.—ԲԵ մատադ...

ԳՐԱԳԻՐ.—ԵԼ մի յերկարացնի, գնա, (բարձրածայն)
Ահաննեսյան Սաղաթել: (Գեղջկուհուն) Գնա, թէ չ
կնսացնեմ. (Գեղջկուհին արտասվելով դուրս և
գնում):

ՄԱՂԱԹԵԼ.—(Մոտենում ե սեղանին, գլխից փափախը
վերցնում ու գլուխը ծուռ ու խեղն կանգնում) Բարի
աջողում:...

ԳՐԱԳԻՐ.—Ասսու բարին, փողը...

ՄԱՂԱԹԵԼ.—(Դողդոջուն ձեռքերով փողը մեկնելով)
Համեցեք, աղա Հակոր:

ԳՐԱԳԻՐ.—(Հաշվելով) Քիչ ա...

ՄԱՂԱԹԵԼ.—Վոնց վոր անցած տարին եր, ենքան ա
ելի...

ԳՐԱԳԻՐ.—Յանի թե ի՞նչ անցած տարին: Անցած տարին
ուրիշա, ես տարին՝ ուրիշ: Ելի տուր, ես տարի տա-
լիքներդ յերկու տակ ա դարձել:

ՄԱՂԱԹԵԼ.—Բա ասում եյին, վոր ամեն տարի...

ԳՐԱԳԻՐ.—(Բարձրածայն) Ի՞նչ ամեն տարի...

ՄԱՂԱԹԵԼ.—Վոր մեր տալիքը միատեսակա, մի շափի...

ԳՐԱԳԻՐ.—Յես քեզ չափ ցույց կր տամ, հայվան...

ՄԱՂԱԹԵԼ.—Աղա Հակոր, յես քեզ համար հափի...

ԳՐԱԳԻՐ.—Գնա, լավ, ճաշին հավը տուն բեր, իմա-
ցա՞ր...

ՄԱՂԱԹԵԼ.—(Ուրախացած) Շնորհակալ եմ, հոգի ջան,
արեգ յերկար լինի, արխային մնա՝ հավը տուն կր-
բերեմ (արագ դուրս ե գնում):

ԳՐԱԳԻՐ.—(Բարձրածայն) Սահակյան Մաթեվոս...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—(Դուան հետևից) Եստեղ եմ:—Եկա...

ԳՐԱԳԻՐ.—ԵԼ չուռ-մուռ մի գա, չափանդ չարժվի,
վոտք կոտրվել ա, գե, հա...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—(Վազելով դեպի սեղանը) Գործիդ հաջո-
ղություն:

ԳՐԱԳԻՐ.—Փողը...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—Ի՞նչ փող:

ԳՐԱԳԻՐ.—Վո՞նց թե՝ ի՞նչ փող, աղահովագրության
փողը...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—(Զարմացած) Աղա Հակոր, յես ավել
եմ...

ԳՐԱԳԻՐ.—(Սպաննալից) Ի՞նչ...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—Մտիս չի՝, Նավասարդի որն եմ ավել:

ԳՐԱԳԻՐ.—Նավասարդի որը...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—Հա, զու ինձանից ձեռաց վերցրիր, ասիր
ապահովագրության տալիքների ժամանակ դուրս կր
գամ:

ԳՐԱԳԻՐ.—Ստացական ունի՞ս:

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—Ի՞նչ ստացական, յես քեզ վոնց վոր կար-
գին մարդու հավատացի, ել ի՞նչ ստացական աղետք
վոր...

ԳՐԱԳԻՐ.—(Տեղից ցատկելով) Ախ, զու գյաղա-գյուղա-
տղա, հլա ինձ վրա մեղք ես ցցո՞ւմ: Կորիր ոչքիցս:

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—Ախր յես...

ԳՐԱԳԻՐ.—Կորիր, քոսոտ չուն, քանի քեզ փոսր չեմ գր-
ցել... իզ ու թողդ չերեա, կորիր...

ՄԱՂԱԹԵՎՈՍ.—Կը գնամ... Դու հլա մի կվիտացի տուր,
վոր ստացել ես...

ԳՐԱԳԻՐ.—(Բռունցքով սեղանին խփելով) Յես քեզ կվերտացի ցույց կը տամ, եշակի մեկը... (Բդավում ե, ձեռքով խփում, վոտքով գետնին զարկում):

(Ներս ե մտնում տանուտերը):

ՏԱՆՈՒՏԵՐ.—(Հարձակվում ե հանգիստ կանգնած Մարկոսի վրա) Դու ի՞նչ ես եստեղ զալմաղալ դցել հը... Շուն շան աղա, յես քո ըռեխս-մըռեխտ աղցան կը չինեմ... Գղի՛ր, ա՛յ դղի՛ր...

ՄԱԹԵՎՈՍ.—Ահակ աղա, ախր յես... յես... ի՞նչ ես առամ... (Ներս ե մտնում զգիրը):

ԳԶԻՐ.—Ի՞նչ ես հրամայում:

ՏԱՆՈՒՏԵՐ.—Ես լածիրակին փոսը պցեցեք, թող շան նման վնգատա:

ՄԱԹԵՎՈՍ.—(Մի բռպե՛ նախ ապշահար ու ապա ցնցվելով) Ահակ աղա, արեիդ մատաղ... յես... յես զալմթ եմ արել, ել չեմ անի, յերեխեքս անտեր մի թողա, բան ու դործից մի դցի ինձ:

ՏԱՆՈՒՏԵՐ.—(Գգիրին) Ասի փոսը: (Գգիրը Մաքեսոսին բաշ-բաշ տալով, դուրս է շպրտում, տանուտերը գըլուխը շփում է): Ոիս, ոիս, գլուխս, վոնց վոր թե՛ պղնձի աման... խժվածում ա... Զահըռումարը գիշերը շատ խմեցինք: Են ոսի աղջկերքն ել մի կողմէց հոգիներս հանեցին:

ԳՐԱԳԻՐ.—Զե, չլա մի ինքդ մատածիր, Ահակ ջան նավասարդի որը փող եմ վերցրել եղ ոգոստոսի աղվեսիցը, հմի կանդնել եա, թե՛ պտի տաս, թե՛ ըսենց, ընենց... Բարով ես յեկել... այ թե՛ համարեցի փողն ու ավի (ֆիք ե ցույց տալիս դեպի դուռը): Բհշը, առ...

ՏԱՆՈՒՏԵՐ.—Ե, քիչ խոսա, դու են ասա, գիշերվա արագից սիրած համար չլա չի խանճել: Սիրաս, վոնց վորթված խիար...

(Ներս ե մտնում մի գյուղացի):

ԳՅՈՒՂԱՑԻ.—Մհակ աղա, աչքիդ լույսին մատաղ, ախր փողս ավեք, ե... իրեք տարի յա, ինչ վոր տունս երվել ա, բայց են ապահովագրությունից ինձ հասանելիք փողը չեմ ստացել:

ՏԱՆՈՒՏԵՐ.—(Կոպիտ) Կստանաս: Ասել եմ, ժամանա- կը վոր գա՝ կստանաս:

ԳՅՈՒՂԱՑԻ.—Ախր եղ ժամանակը յե՞րբ ա գալու, հոգի ջան, աչքս ջուր կտրվեց, ե... իրեք տարի յա, քիչ չի:

ԳՐԱԳԻՐ.—Վոր ասվեց դեռ չկա, ուրեմն չկա, գնա:

ԳՅՈՒՂԱՑԻ.—Վո՞նց թե չկա, եղ չկան հենց իմ գլխին կանգնե՞ց, քե մատաղ, տասնոխտ տարի յա ապահովագրության հմար փող եմ տալի, հմի ես որվաս որը դուք ինձ պտի ողնեք, ասում եք, «չկա», բա եղ վո՞նց կըլնի, քե մատաղ:

ՏԱՆՈՒՏԵՐ.—Ի՞նչ անեմ, թե տասն ու ոխար տարի ա- տալիս ես, կասես ջիբս եմ կոխում: Գնա, քանի հետո մարդավարի յեմ խոսում:

ԳՅՈՒՂԱՑԻ.—Լավ, լավ, զնում եմ (շուր գալով և ուղե- վորվելով դեպի դուռը): Ասի, վայ թե ժամանակս հասած ըլի, գնամ ստանամ:

ՏԱՆՈՒՏԵՐ.—Հայվան: (Գյուղացին գնում է):

ԳՐԱԳԻՐ.—(Գյուղացու հետեւից ծիծաղելով) Վոչ թե հասել ա, չլա մի բան ել անցել ա, հայ, հայ (դառ- նալով տանուտերին) մտքի՞ր գա, դու եղ փաղովը քեզ համար մի յորդա ձի առար:

ՏԱՆՈՒՏԵՐ.—(Վիրավորված) Դե լավ... հմի ի՞նչ ա- նենք, չե՞ վոր դու քու փայն ել ստացար:

ԳՐԱԳԻՐ.—Լավ, մի նեղանա, հանաք արե...

ՏԱՆՈՒՏԵՐ.—Ըսկի չեմ ել մտածում, դարձու գիտաս ի՞նչ
ա, են վոր գիշերվա են զիւ քեփեցը հմի դլուխա
տրաքլում ա... վայ, վայ, վայ:

ԳՐԱԳԻՐ.—Հմի մի լավ կը բժշկեմ: (Բարձրաձայն) Իդի-
թյան Պողոս:

ՊՈՂՈՍ.—(Շտապով ներս մտնելով, խոնարհ գլուխ ե
տալիս տանուտերին ու զգիրին) Բարի աջողում:

ԳՐԱԳԻՐ.—Բարի աջողում: Գիտե՞ս ինչ կա, Պողոս, ես
սհաթիս վազիր ձերոնց տուն, հաց զցիր, մենք դա-
լիս ենք...

ՊՈՂՈՍ.—(Ուղերձվելով դեպի դուռը) Այ համեցեք,
ջուխտ աչքիս վրա տեղ ունիք: Մի բոպեյում ամեն
բան պատրաստ կը լինի:

ԳՐԱԳԻՐ.—Են առյուծի կաթից սուփրա հանի:

ՊՈՂՈՍ.—Արխային կացեք (դուրս ե վագում):

ԳՐԱԳԻՐ.—Այ թե քեզ լոնց կը բժշկեմ, ամեն բան ձե-
սաց գլուխ յեկավ: Դե, պատրաստվի, Աչակ ջան:
(Գրագիրը սեղանից մատյաներն ու զրբերը հավա-
բում ե ու դարսում սեղանի արկղի մեջ) Այ գղիր...

ԳԶԻՐ.—Ի՞նչ եք հրամայում:

ՏԱՆՈՒՏԵՐ.—Դան հետեւ սպասող գեղացիներին ա-
սու, վոր եղուց դան... Եսոր ել ընդունելություն
չկա, պրծավ...

ԳԶԻՐ.—Աչքիս վրա:

(Տանուտերը գլխարկը՝ շվացնելով՝ դնում է գլխին,
գրագիրն ել հետևից: Դուրս են գնում: Բեմի հետե-
բում զյուղացիների աղմուկ, բարձրաձայն տըր-
տունից):

(Վարագույրը ծածկվում է,
(Մունետիկներն իրենց տեղերն են գալի):

1. Ապահովագրություն

Կար ժամանակ ե ցարի

Տրզում ելին աղեքը

Ի հաշիվ աղքամների:

2. Եղ ժամանակ ցավ ու վիշտ

Շատ քաշեցին գյուղացիք

Խարջ ու խարան ծանր վիշտ,

Դեհ գյուղացիք՝ դիմացեք:

3. Յեվ աղեքն ամեն կերպ

Լցնում ելին չեր ու ծոց,

Ծաղրում ելին գյուղը միշտ,

Հիմարացնում գյուղացոց:

4. Որենքներին հակառակ

Կալվածքներից հարկ տալով՝

Գյուղացին եղ ժամանակ

Հաց չեր ուտում կուշտ փորով:

5. Եղ որերը զնացին,

Հող ու մոխի՛ր ցարն չիմա.

Խեղճ գյուղացուն միշտ ողնող

Խորհրդացին Թետապ կա:

6. Նա գյուղին և ուշողիր,

Եղ լավ գիտե ամեն չեն.

Խորհրդացին Պետապից

Տնաքանդը-տնաշեն:

(Մունետիկները գնում են, նախարեմ ե դուրս գալիս
Պետապի գործակալը):

ՊԵՏԱՊԻ ԳՈՐԾԱԿԱԼ.—Հիմա, բնկերներ, քանի վոր
գուշ տեսաք, թե ի՞նչ գրության մեջ եր ցարի ժա-
մանակ ապահովագրության գործը, մենք կարող
